№ 176 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16

1906

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16 № 176

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՄՇԱԿ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ յուլիսի 1-ից մինչև 1 հոկտեմբերի 2 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Բագուի բաժանորդներին լրագիր հասցնելը խմբագրութեան տուած հասցէներով վերցրել է իր վրա Թադէոս Բունիաթեան (գրավաճառանոց, հայոց եկեղեցուն կից), ուստի լրագրի համարների ուշ կամ անկանոն ստացվելու դէպքում Բագուի բաժանորդները պէտք է դիմեն նրան։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Հասցէն փոխելու համար պէտք է վճարել 40 կոպէկ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

## ԱԶԴ

Խմբագրութիւնից ԱՆԿԱԽ պատճառներով «ԱՇԽԱՏԱՆՔԻ» յաջորդ՝ 29-րորդ համարը այս կիրակի լոյս չը տեսաւ։

«Աշխատանքի» խմբագրութիւն

1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտարարում է, որ Ջրկիրների մատակարարած ջրի սակագինը, մինչև ընդհանուր տարիֆի վերաքննութիւնը, մնում է նախկինը, այսինքն 3/4 կոպ. իւրաքանչիւր դոյլի համար։ առ 1—2

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կենտրոնական Ժողով. Վերջին տեղեկութիւններ. Անցաւ տասն տարի. Մահափորձ մինիստր-Պրեմիէր Ստոլիպինի կեանքի դէմ. Էջմիածնի համագումարը. Ընտրութիւնները Թիֆլիսում. Բորչալուի պատգամաւորութիւնը Թիֆլիսում. Դպրոցական խմբեր. Մի կոչ ջահելներին. Կենտրոնական Ժողովի շուրջը. Նամակ Շուշուց. Նամակ Երևանից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Նամակ Դանիայից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

### V

Կենտրոնական ժողովի առաջին կազմը անշուշտ կը զգայ այն փափկանկատ վիճակը, որի մէջ նա գտնվում է։ Այդ կազմը արդիւնք է մի շարք աննպաստ հանգամանքների։ Ժողովուրդը համեմատաբար քիչ հետաքրքրութիւն, մի քանի տեղ կատարեալ անտարբերութիւն, իսկ մի քանի տեղ նոյն իսկ հակառակ տրամադրութիւն ցոյց տուեց դէպի Կենտրոնական Ժողով գնալու առաջարկը։

Մինչդեռ պէտք էր սպասել ուրիշ վերաբերմունք դէպի մի այնպիսի գործ, ինչպիսին է ռուսահայերի կանոնաւոր կենտրոնական ժողով գումարելու առաջին փորձը։

Ռուսահայի համար վերջին ժամանակ անհրաժեշտութիւն և տենչանք էր դարձել կանոնաւոր կերպով կազմված ազգային համագումարը, իսկ ներկայ դէպքում մենք չենք տեսնում ոգևորութիւն, գաղափարական հրճուանք և մտաւոր ու բարոյական կարողութիւնների բուռն արտայայտութիւն։

### VI

Եթէ աչքի առաջ ունենանք այն դժոխային պայմանները, որ ստեղծել են մեր երկրում հայ-թուրքական ընդհարումները, եթէ ուշադրութեան առնենք պետութեան գործերի ընդհանուր ծանր վիճակը և մեր երկրի անբարեկարգ դրութիւնը, մենք կը տեսնենք, որ մենակ այդ հանգամանքները բաւական էին աննպաստ կերպով ազդելու հասարակութեան տրամադրութեան վրա։

Բայց մեր վերջին շաբաթների իրականութիւնը աւելացրեց դրանց վրա մի շարք չափազանց վրդովեցուցիչ երևոյթներ, որոնք հանդէս եկան ընտրութիւնների ժամանակ և որոնք ոչ միայն սպանեցին ամէն մի ոգևորութիւն դէպի առաջիկայ գործը, այլ և յետ մղեցին շատերին ընտրութիւններին մասնակցելուց։

Եւ վերջ ի վերջոյ ստեղծվեց մի այնպիսի դրութիւն, որ կարծես թէ կենտրոնական ժողովը ինչ որ մի օտար, մեզանից կտրված անվստահելի և անժողովրդական մի մարմին է։

### VII

Անմիջող դուրս եկաւ կենտրոնական ժողովի առաջին կազմը, և նա իրօք ներկայացուցիչ է մեր ժողովրդի միայն մի աննշան մասի։

Դա անկասկած է։ Եւ շատ ցաւալի է։

Այդ հանգամանքը պէտք է իր որոշ բարոյական ճնշումը գործ դնէ կենտրոնական ժողովի անդամների վրա։

Արդարև դեռ քանի ժողովը զբաղված կը լինի ծրագրում նշանակված հարցերով, նրա հետ կարող են հաշտվել մարդիկ, բայց հէնց որ նա կը փորձէ անցնելու աւելի ընդհանուր խնդիրների և այնպիսի ծրագիրների, որոնք շօշափում են ազգի ընդհանուր կացութեան շահերը, իսկոյն ասպարէզ կը գայ հարազատ ներկայացուցչութեան և կատարեալ լիազօրութեան հարցը։

—Որքա՞ն, ո՞ր աստիճանով դուք կոմպետենտ, հեղինակաւոր և իրաւասու էք ազգի անունից խօսելու այն հարցերի մասին, որոնց համար խօսք չէ եղել, երբ յայտարարվել են ընտրութիւնները։

### VIII

Առհասարակ իւրաքանչիւր ներկայացուցչական ժողով իր զբաղմունքների մէջ սահմանափակված է այն ծրագրով, որի հիման վրա նա հրաւիրված է։

Դա ոչ թէ միայն ձևականութիւն է, այլ և տրամաբանական մի երևոյթ։

Արդարև, ծրագրի համեմատ ժողովուրդը ընտրում է այնպիսի անձերի, որոնք կարող են հմուտ և հեղինակաւոր լինել այդ ծրագրով գործելու համար և կարող են բոլորովին անպատրաստ լինել ուրիշ խնդիրների քննութեան համար։

Բայց մարդիկ յաճախ չեն բաւականանում եղած ծրագրով և թևակոխում են սահմանից դուրս դէպի ուրիշ խնդիրների քննութիւնը։ Եւ ինչո՞ւ մարդիկ չօգտվեն դէպքից և չը զբաղվեն հերթական, հրատապ, ընթացիկ հարցերի քննութեամբ։ Բայց որպէսզի այդ յաւելեալ գործունէութիւնը ունենայ իրական նշանակութիւն և ներկայանայ իբրև հեղինակաւոր ձայն, անհրաժեշտ է, որ ներկայացուցչութիւնը լինի հարազատ, կատարեալ և բարոյական համաձայնութիւն լինի ժողովրդի և նրա անունով խօսողների միջև։

### IX

Այդ տեսակէտով կենտրոնական առաջին ժողովը, եթէ ունի նոր, ընդարձակ խնդիրներ քննելու և մշակելու համար, նա կարող է նրանց վերաբերութեամբ նախապատրաստական գործողութիւններ միայն կատարել, խորհրդակցութիւններ անել, իսկ վերջնական որոշումը կամ եզրակացութիւնների վաւերացումը թողնել հետևեալ կենտրոնական ժողովին, որին նախօրօք յայտարարված կը լինի թէ ինչ բանի համար է հրաւիրվում ժողովը։

Որպէսզի կարելի լինի ազգի անունից առաջարկել մի որ և է խոշոր ու պատասխանատու ծրագիր, պէտք է ունենալ ազգի լիազօրութիւնը այդ գործի համար։

Կենտրոնական ժողովը բարոյական հեղինակութիւն չի ունենայ ազգի անունից այնպիսի յայտարարութիւններ անելու, որոնք ունեն ազգային նշանակութիւն և կրում են պատասխանատու բնաւորութիւն։

### X

Մենք այստեղ չենք դնում այն հարցը, որ ներկայ ընտրութիւնները կատարվել են ոչ քառանդամ կարգով, այլ երկաստիճանեան եղանակով։

Անշուշտ անհրաժեշտ է մտցնել քառանդամ կարգը և նրան դարձնել պարտաւորական՝ ընտրութիւնների համար։

Սակայն ներկայ հարցում կարևոր է ոչ ընտրութեան եղանակը, այլ լիազօրութեան բնաւորութիւնը։ Կաթողիկոսական ընտրութիւնները մինչև այժմ կատարվել են աւելի ևս հին սիստեմով, բայց ոչ ոք հարց չէ յարուցել լիազօրների իրաւասութեան մասին։

Մենք առաջ կը բերենք մի օրինակ, որ մեծ առնչութիւն ունի ներկայ կենտրոնական ժողովի հետ։ Մեր խօսքը այն համագումարի մասին է, որ ժողովվեց անցեալ տարի Թիֆլիսում և մշակեց հայկական հանրագիրը։ Այդ համագումարի անդամները ընտրված էին աւելի ևս անկատար եղանակով. ինքը համագումարը ընդգծում էր իր կազմութեան թերութիւնները, և սակայն ոչ ոք լուրջ կերպով հարց չէր դնում նրա իրաւասութեան և լիազօրութեան մասին։

Հանրագիրը մշակվեց և մատուցվեց կովկասեան Փոխարքային՝ մինիստրների խորհրդին ներկայացնելու համար։

Ազգը ընդունեց հանրագիրը գոհ սրտով և ոգևորութեամբ։

### XI

Եւ հասկանալի է թէ ինչու։

Ճիշտ է, ինքը համագումարը իբրև ներկայացուցչութիւն թերութիւններ ունէր, բայց ամբողջ գործը կազմակերպված էր բարեխիղճ կերպով։

Արդարև, յատուկ նախապատրաստական ժողովներով մշակված էին հանրագրի կէտերը, տպագրված և ուղարկված ամէն տեղ։ Այդ կէտերը դարձել էին ընդհանուրի սեփականութիւն։ Ամէն տեղ մարդիկ ժողովվում էին, քննութեան ենթարկում այդ բոլոր կէտերը, կայացնում իրանց որոշումները, յետոյ ընտրում ներկայացուցիչներ այդ որոշումները ներկայացնելու համագումարին։ Բոլոր մտածող, դատող մարդիկ մասնակցել էին հանրագրի կէտերի քննութեանը և մտցրել իրանց նկատողութիւնները։

Իսկ ինքը համագումարը աշխատել էր կարելին չափ ուժեղացնել իր բարոյական հեղինակութիւնը և հրաւիրել էր գործակցութեան նաև խմբագրութիւնները, հասարակական հիմնարկութիւնները ու քաղաքական կուսակցութիւնները։

Եւ այդպիսով նա աշխատել էր կարելին չափ լիակատար դարձնել ազգի ձայնը։

Եւ յիրաւի, համագումարը որքան էլ պակասաւոր լինէր տեխնիկական տեսակէտից, բարոյական իր բովանդակութեամբ նա լիակատար էր՝ իբրև ժողովրդական ներկայացուցչութիւն։

Այդ բարոյական բովանդակութիւնը պակասում է այժմ։

Ա. Քալանթար

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

*Էջմիածին, 15 օգոստոսի*

Առ այժմ եկել են 34 պատգամաւոր։ Համագումարի բացումը տեղի կունենայ երեկոյեան։

Հ. Առաքելեան

*Թարթառ, 14 օգոստոսի*

Երէկ երեկոյ Ջիվանշիրի գաւառապետ Ֆլիգինսկին իր տուն վերադառնալու միջոցին ենթարկվեց իր բնակարանից ոչ հեռու յանկարծակի յարձակման։ Լսվեցին ատրճանակի երկու հարուածներ։

Գաւառապետը մեռաւ։

Թէ ովքեր են սպանողները, քանի հոգի և ինչ պատճառով են յարձակվել յայտնի չէ։ Սպանողները անյայտացան և նրանց հետքը չէ գտնված։

*Շուշի, 14 օգոստոսի*

Ջիվանշիրի գաւառապետի սպանութեան լուրը անսպասելի էր բոլորի համար։

Մեզ լուր հասաւ, որ գեներալ Գոլոշչապովը կարգադրել է մի հարիւրեակ զօրք ուղարկել Թարթառ պաշտպանելու ազգաբնակութիւնը և պահանջելու յանցաւորներին։

Սպանողները անյայտ են։

*Ղազախ, 14 օգոստոսի*

Ջիթչեան քահանայի սպանութեան գործում մեղադրվում են Քէօսնա-Ղըշլաղ, Եարատիլլու և Թաթլու գիւղերի բնակիչները։

Գաւառապետը գեներալ-նահանգապետի առաջարկութեամբ կարգադրել է, որ այդ գիւղերի բնակիչները ենթարկվեն երդումի։ Իսկ նշանակած էկզեկուցիան վերացված է։

*Պետերբուրգից օգոստոսի 12-ին, երեկոյեան ժամի 9-ին, մեզ հեռագրում են.*

«Այսօր ցերեկվայ ժամի 3 և 20 րոպէին երեք հոգի, զինուորական և քաղաքացիական հագուստներով, պրեմիէր-մինիստր Ստոլիպինի ընդունարանում ռումբ են նետել։

Մինիստրը անվնաս է մնացել. սաստիկ վնասվել են նրա երեխաները։ Սպանվել են գեներալ Զամեատին, կամերգեր Վորոնին, դռնապանը և չարագործները։

Վիրաւորվել են մի քանի պաշտօնեաներ։ Տան մի մասը բոլորովին փլվել է։

Սպանվածների թիւը վերջնականապէս որոշված չէ։

Գէորգբէգեան

*Պետերբուրգ, 12 օգոստոսի, ժամի 10 և 14 ր.*

Զոհերի թիւը ստուգված է. սպանվել են 23 հոգի և վիրաւորվել՝ 25։

Գէորգբէգեան

*Շուշի, օգոստոսի 9-ին*

Ալփաւուտից (Ագդամի տակ) ստացվել է մի հայերէն նամակ հայ գերիներից գրված, Սոնիչկա ստորագրութեամբ, որով այդ կինը յայտնում է թէ՝ ինքը և իրան հետ հինգ հոգի՝ երկու կին, մի ուսանող, մի փոքրիկ աղջիկ և Բախշին (Արամեանց) գտնվում են այնտեղ, իսկ Գաբրիէլի կինը և աղջկան տարել են Արաքսի ափերը։ Նա խնդրում է իրանց շուտ ազատել այդտեղից և երկիւղ է կրում, որ իրանց կը կոտորեն։ Ուրեմն յայտնի է առ այժմ ութ գերիների տեղը, իսկ մնացած տասնինը դեռ անյայտ. բոլոր գերիների թիւը 27 են հաշւում։

*Շուշի, օգոստոսի 10-ին*

Ներկայումս Շուշում տաք խօսակցութեան առարկայ է այն դաւադրութիւնը, որ բացվեց Թուրքերի Թաղում։

Խանի աղջկայ աղբիւրին կպած մի տան տակի Թուրքի խանութի միջից յայտնվել է մի ական, որը տանում է դէպի վեր՝ հարևան Ասրի Այդինեանի տունը, ուր գեներալ Գոլոշչապովի բնակարանն էր։ Ականը փորված է 6 արշին տեղ և անկասկած նպատակ է ունեցել հասնելու Այդինեանի տանը և ցնդեցնելու այդ տունը և գեներալին, որը սաստիկ հակակրութիւն է վայելում Թուրքերից և որին նրանք մեղադրում են իբրև իրանց կրած պարտութեանը նպաստող յօգուտ հայերի։

*Հին-Նախիջևան, օգոստոսի 10-ին.*

Մօտ օրերս Վարժաղիար գիւղացի մի հայ իր սայլով գնում է հանդը «քիւլաշ» բերելու և երկար ժամանակ չը վերադառնալով, գտնում են նրան մորթված, վիզը բոլորովին կտրված։

*Գանձակ, օգոստոսի 14-ին*

Ատրճանակի հարուածով սպանված է Ջիվանշիրի գաւառապետ Ֆլիգինսկին. մարդասպանները ազատ են։

(«Հեռ. Գործ.»)

*Գանձակ, օգոստոսի 14-ին*

Հայ Ջ...եան քահանայի անհետանալու պատճառով, ինչպէս Աղստաֆայում լսեցինք, Թուրք Թաթլու գիւղում էկզեկուցիա է նշանակվել։ Շուշուց մեր գնացքով բաւական Թուրքեր եկան հայկական տարազով և կտնկի նման ջարդված գլխարկներով։ Սրանց չէ կարելի արտաքինով զանազանել հայերից։ Նրանցից մէկը պարզ խոստովանեց, որ Թիֆլիսում ռազմամթերքներ է գնում։

Սագան

Մեր ստացած վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ դրութիւնը օրէցօր կրիտիքական է դառնում Օրդուբաթի շրջանում։ Մի շարք խառն, մասնակի սպանութիւնների պատճառով հաղորդակցութիւնը Նախիջևանի, Օրդուբաթի, Ագուլիսի և շրջակայ գիւղերի հետ միանգամայն վտանգված է։ Այդ բանին աւելի են նպաստել հետևեալ դէպքերը. օգոստոսի 7-ին երեք հոգի Ագուլիսից գնում են Դիսար գիւղը բերելու ագուլեցի Յով. Յարութիւնեանի ընտանիքը։ Դեբբենդ կոչված կիրճից անցնելու ժամանակ երեք երիտասարդները ենթարկվում են մի խումբ զինված Թուրքերի յարձակման։ Երիտասարդներից մէկը, որ գնում է եղել ընկերներից առաջ, առաջինն է զոհ գնում դարանամուտ Թուրքերի գնդակին։ Նրա միւս երկու ընկերը տեսնելով վտանգը, սկսում են պաշտպանվել հրացանաձգութեամբ և ետ քաշվել, ու ոչ մի յոյս չունենալով փրկելու իրանց ընկերին, փախչում, ազատում են իրանց կեանքը և հասնելով Ագուլիս պատմում են եղելութեան մասին։

Թուրքերը դժբաղդ զոհին չարաչար տանջանքներով սպանում են և ականջները կտրելով տանում։

Ագուլիսից գնում են բերում գժբաղդ զոհին և մեծ շուքով թաղում։

Դէպքի վայրն է գալիս պրիստաւը իր պահակներով և 50 զինուոր մի սպայով, բայց չարագործներին գտնել անկարելի է լինում։

Նոյն օրը Տանակերտ գիւղին մօտիկ սպանվում են անյայտ անձանց ձեռքով երկու Թուրք։

Վերջին սպանութեան լուրը յուզմունք է առաջցրել Օրդուբաթում, և Թուրք ջանբեգարները պատեհ առիթից օգուտ քաղելով, սկսում են իրանց ավարագործութիւնները. յարձակվում են հայ պոստատարի վրա ու տեղն ու տեղը սպանում, առանց որևէ պատճառի։

Չը նայած պրիստաւի ձեռք առած եռանդուն միջոցներին, նրա անհաշտ ու արդարադատ վերաբերմունքին, այնուամենայնիւ գտնել յանցաւորներին ու ոճրագործներին չէ աջողվում։ Զանգեզուրի գաւառի փախստական Թուրքերը և ջանբեգարների խմբերը վխտում են Օրդուբաթում ու շրջակայքում և դժոխք ստեղծում երկու հարևան ազգութիւնների համար։ Դրութիւնը վտանգված է և լուրջ։

*Ներքին-Ախտա, 8 օգոստոսի*

Ամսիս 6-ին Դարաչիչագի կողմից, հրաժարված պ. Ս. Զաւարեանի փոխարէն, Էջմիածնի կենտրոնական ժողովի պատգամաւոր ընտրվեց ուսուցիչ Արիստակէս Մանուկեանցը, անձնափոխանորդ՝ Յարութիւն Ներսէսեանը։

Գործակալ՝ Ռաֆայէլ քահ. Տէր-Գէորգեան

## ԱՆՑԱՒ ՏԱՍՆ ՏԱՐԻ

Տասն տարի սրանից առաջ Բօսֆօրի մայրաքաղաքը ականատես եղաւ մի չը տեսնված, չը լսված համարձակ արարքի։ Հայ յեղափոխական գործողները գրաւեցին Օսմանեան բանկը և սպառնական դիրք բռնելով պահանջ յայտնեցին բաւարարութիւն տալու հայ ժողովրդի պահանջներին։

Օսմանեան բանկի հետ տեղի ունեցած դէպքը վերջին փորձն էր, որին դիմեցին Պօլսի գործողները ազդելու օսմանեան կառավարութեան վրա և ստիպելու եւրոպացիներին հէնց իրանց շահերի տեսակէտով բաւարարութիւն տալու հայերին։

Սակայն այդ ծայրայեղ դէպքն էլ անցաւ զուր տեղ։ Եւրոպան վճռել էր չը խառնվել օսմանեան գործերի մէջ և չը խանգարել կառավարութեանը պատժելու հայերին, ինչպէս էլ նա ցանկանար։

Գլադստոնը իր ոգելից և ազդեցիկ ճառերից յետոյ թուլացրել էր իր ձայնը, Ռօզբերրին կտրական կերպով յայտարարել էր, որ Անգլիան չէ կարող միջամտել Թիւրքիայի գործերի մէջ միայնակ։ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Հանոթօն բոլորովին ձեռք էր վերցրել հայերից։ Գերմանիան լուռ էր պաշտօնապէս, իսկ գաղտնի պաշտպանում էր Աբդուլ-Համիդին։ Իտալիան միայն պլատօնական համակրութիւն էր ցոյց տալիս հայերին։ Աւստրո-Ունգարիան ամենևին չէր ցանկանում հայերի պատճառով խախտել քաղաքական այն հաւասարակշռութիւնը, որ նա ստացել էր Բօսնիայի գրաւումով և Բալկանեան թերակղզու վրա ստացած գերադաս դերով։ Իսկ Ռուսաստանում արտաքին գործերի մինիստրն էր Լօբանով-Ռօստօվսկին, որը և կատարեց ամենամեծ ոճիրը հայ ազգի դէմ և դաւաճանեց ռուսաց արևելեան քաղաքականութեանը Բօսֆօրի ափերում։

Օսմանեան բանկի դէպքը վերջին յուսահատական, միևնոյն ժամանակ չափազանց խիզախ քայլն էր, որ հայերը արին, նախ քան նրանք բոլորովին կորցրած կը հրապարակէին իրանց դատը, որի համար նրանք տուին այնքան զոհ, այնքան մատաղ ուժեր և հարստութիւններ։

Այժմ Ռուսաստանը հասկացել է իր քաղաքականութեան սխալը և դատապարտում է Լօբանով-Ռօստօվսկու քաղաքականութիւնը, որովհետև Գերմանիան օգտվեց դէպքից և Փոքր-Ասիայի մէջ ազդեցութիւն ձեռք բերելով թուլացրեց ռուսական հեղինակութիւնը։

Սխալն արված էր. բայց նրան ուղղելն այնքան էլ հեշտ չէ։

Օսմանեան կառավարութիւնը յանդգնեց, մերժեց ամեն մի միջամտութիւն և մինչև այժմ էլ չիրագործեց Բեռլինի վեհաժողովի 61-րդ յօդուածը։

Հայաստանը ամայացաւ, գաղթականութիւնը մեծ ծաւալ ստացաւ և Փոքր-Ասիան թշուառացաւ։

Մի երկիր, որ կարող էր այժմ բարգաւաճ և կուլտուրական երկիրներից մէկը լինել, հասցրած է ոչնչութեան վերջին աստիճանին։

Իսկ հին հարցը դրված է բոլորի առաջ և հրամայողաբար պահանջում է բաւարարութիւն։

Ա. Քալանթար

## ՄԱՀԱՓՈՐՁ ՄԻՆԻՍՏՐ-ՊՐԵՄԻԷՐ Պ. Ա. ՍՏՕԼԻՊԻՆԻ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

(Քաղուածք Պետերբուրգի Հեռագր. Գործակալութիւնից)

Պետերբուրգում, օգոստոսի 12-ին, ժամը 3-ին մինիստր-պրեմիէր Պ. Ա. Ստոլիպինի կեանքի դէմ մահափորձ է կատարվել։ Ապտեկարսկի կղզու վրա, ամառանոցում, ընդունելութեան ժամանակ ռումբ են նետել, որի ժամանակ բաւականաչափ մարդիկ են սպանվել ու վիրաւորվել։ Վիրաւորվել է Ստոլիպինի որդին, աղջիկը, իսկ ինքը Ստոլիպինը անվնաս է մնացել։

Դէպքի մանրամասնութիւնը հետևեալն է. ցերեկվայ ժամի 3-ի մօտերը մինիստրի ամառանոցին մօտենում է մի վարձված լանդօ, որին լծված են եղել երկու հիանալի ձիաներ։ Լանդօյում նստած են եղել 4 հոգի. երկու զինուորականներ, արտասահմանեան նշանազգեստով, և երկու քաղաքացիներ։ Չորս հոգին էլ մտնում են նախադուռը. զինուորականներից մէկի ձեռքին այդ միջոցին գտնվում էր մի ինչ որ փաթեթ, որի մէջ էր, երևի, պայթուցիկ ռումբը, որը պատահաբար ընկնում է ու պայթվում։ Պայթումը լինում է շատ զօրեղ. հարևան սենեակում սպանվում է գեներալ-մայոր Զամեատին, թռցրված է հօֆմէյստեր Բօրօնինի գլուխը, սպանված են դռնապանը և նրա մօտ եղած բոլոր մարդիկ, ի թիւս որոնց և չորս չարագործները։ Փլված է ամբողջ ետևի պատը, վերևի յարկում. Ստոլիպինի աղջիկը վիրաւորվել է երկու ոտքից, որը գուցէ կարիք լինի կտրել։

Մինիստրի մանկահասակ որդին նոյնպէս վիրաւորվել է. կոտրված է ոտքը։ Ինքը մինիստրը անվնաս է մնացել։ Պայթումի ուժից պոկված են ընդունարանի և առանձնասենեակի դռները, լանդօն, որով եկել էին չարագործները, ծռմռված է, կառապանը սպանված. ձիերը անվնաս են մնացել։ Վիրաւորված է Պետերբուրգի գործակալութեան դիրեկտօրներից մէկը՝ Շախօվսկին, որ գտնվում էր սենեակներից մէկում։

Վնասվածների թիւը հաշւում են 60, որոնցից սպանվել են 22 հոգի։ Բացի գեներալ Զամեատինից սպանվել են նոյնպէս ներքին գործերի մինիստրի խորհրդի անդամ Խվօստովը, արարողապետ Վօրօնին, իշխան Նակաշիձէ, ժանդարմերիական ոստիկանները և մինիստրի ծառաները։ Մինիստրի բնակարանում այժմ պեղումներ են կատարում հրդեհաշէջ խմբերը։

Ստոլիպինին այցելել են քաղաքային բնակարանում Մեծ Իշխանները և բարձրաստիճան անձինք։

Կատարված քննութիւնը հաստատել է, որ չարագործները եկել են Մոսկվայից։ Գլխաւոր յանցաւորը, որի դիակի վրա պահապաններ են նշանակված, 25—27 տարեկան սիրուն երիտասարդ է։ Զինուորական նշանազգեստը նրանք հագած են ունեցել իրանց նպատակը իրագործելու համար միայն։ Դէպքից մի քանի օր առաջ մինիստրին ուզեցել է ներկայանալ պաշտօնաթող օֆիցեր Բօրօրիկինը՝ մահափորձի մասին նախազգուշացնելու, բայց մինիստրը նրան չէ ընդունել։ Օգոստոսի 12-ին, երեկոյեան, ներքին գործերի մինիստրի օգնական Մակարովի կարգադրութեամբ, Բօրօրիկինին հարցաքննութեան են կանչել։

Պայթումի միջոցին մինիստրը ընդունելիս է եղել Սիմբիրի ազգաբնակութեան պարագլուխ Պօլիվանովին և Սիմբիրի վարչութեան նախագահ Բէլեակովին։ Վերջիններս վկայում են, որ մի քանի պայթումներ են տեղի ունեցել։ Մինիստրի առաջին խօսքը եղել է այն հարցը թէ՝ «ո՞ւր է իմ ընտանիքը»։ Տեսնելով տան մի մասը փլված, մինիստրը ամենից առաջ շտապեց դէպի փլուածքը և այս ու այն կողմը ձգելով տախտակները, դուրս հանեց տակից իր երեխաներին։ Երեք տարեկան որդին վիրաւորված է գլխից և ազդրից, աղջիկը՝ ոտքերից։ Երեկոյեան դէմ Պետրոպաւլովսկի հիւանդանոցն են տարվել 28 դիակներ և 24 վիրաւորներ։ Դիակների մեծ մասը պատառ-պատառ են եղել, մարմնի մասերը իրարից բաժանվել. շատերը գլուխ չունեն, շատերը՝ ձեռքեր, ոտքեր։ Առանձին դրված է չարագործներից մէկի դիակը, որի փորոտիքները թափված են, դէմքը տաշված, կուրծքը ճեղքված, ոտքերն ու ձեռքերը ջարդոտված, իսկ նրանից քիչ հեռու, ծերունի դռնապան Կլեմենտիէվը, որ 40 տարի ծառայել է 16 մինիստրների։

Թագաւոր կայսրը մինիստր-պրեմիէր Ստոլիպինին արժանացրել է հետևեալ հեռագրին.

«Խօսք չեմ գտնում իմ զայրոյթը արտայայտելու համար։ Փառք Աստուծոյ, որ դուք անվնաս էք մնացել. յոյս ունեմ, որ ձեր որդին եւ աղջիկը կառողջանան շուտով, նոյնպէս եւ միւս վիրաւորները»։ «ՆԻԿՈԼԱՅ»։

Մինիստր Ստոլիպինը արդէն դժբաղդութեան առիթով բազմաթիւ ցաւակցական հեռագիրներ է ստացել Մեծ Իշխաններից ու Իշխանուհիներից, բարձրաստիճան անձնաւորութիւններից, ի միջի այլոց և կոմս Վիտտէից։

Այդ դէպքից առաջ մինիստրը ստացել է երկու նախազգուշացումներ։ Հաղորդում են, որ չարագործութեանը մասնակցողներից մէկը, որ գտնվում է Պետրոպաւլովսկի հիւանդանոցում, վիրաւորված է թեթև կերպով։ Պայթումի ժամանակ վիրաւորվածներից երեք հոգի ուղարկված են բանտային հիւանդանոցը, որովհետև կասկածում են, որ նրանք ևս մասնակցել են։ Բացի դրանից կալանաւորվել են ուրիշ 4 հոգի ևս: Վիրաւորվածների թւումն են գտնվում երկու չինովնիկներ, իշխ. Նիկոլայ Շախովսկին, իշխ. Պրոկոֆիյ Շերվաշիձէ, ժանդարմների կորպուսի փոխ-գնդապետ Սօմօվը և այլն:

Ինչպէս վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, ռումբը ոչ թէ պատահաբար է ձգված, այլ գիտութեամբ: Երբ լանդօյով եկողները, երկուսը ժանդարմերիական օֆիցէրի հագուստով և երկուսը քաղաքացիական, ուզեցել են ներս մտնել, դռնապանը յայտնել է, որ ընդունելութեան ժամը լրացել է և նրանց չէ կարող ընդունել. Նրանք ուզեցել են ոյժով ներս մտնել, չէ աջողվում, և նետում են ռումբը:

## ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

II

Ես յայտնեցի, որ պէտք է մասնակցել ժողովին, և ահա ինչու:

Էջմիածնում ազգային-եկեղեցական ժողով գումարելու գաղափարը նոր չէ. այդ հարցը վաղուց էր դրված հրապարակի վրա: Եթէ թերթելու լինենք «Մշակի» անցեալ տարիների համարները, կը տեսնենք, որ վաղուց այդ հարցը արծարծված է եղել, բայց ներկայ Կաթողիկոսը ոչ մի ձգտումն և տրամադրութիւն չէ ցոյց տուել իրագործել այդ գաղափարը:

Վերջապէս անցեալ տարւայ ապրիլ ամսին Թիֆլիսում գումարված հայկական համագումարի ամբողջ գործունէութեան արդիւնքներից մինն էլ եղաւ մի նոր, աւելի բազմամարդ ազգային ժողով գումարելու անհրաժեշտութիւնը: Ընտրված բիւրօն որոշեց գումարել երկրորդ համագումար Թիֆլիսում և այդտեղ գտնել մի մեծ համազգային ժողով գումարելու առաջարկը: Որոշվեց համագումարի նոյնիսկ օրը, և հրաւիրագրերը արդէն պատրաստ էին ուղարկելու, երբ Դաշնակցութեան կողմից առաջարկութիւն եղաւ յետաձգել համագումարը, րոպէն յարմար և աննպաստ նկատելով: Բիւրօն ընդունեց այդ առաջարկը կամ, իր միաձայնութեամբ ընկաւ ծուղակի մէջ, որովհետև բանից դուրս եկաւ, որ աշխատելով խանգարել ոչ միայն համազգային ժողովի այլ և II-րդ համագումարի միտքը, դաշնակցականները ունեցել են իրանց գաղտնի ծրագիրը, այնպէս սարքել, որ համագումարի գաղափարը համարվի իրբև Դաշնակցութեան գործ և նրանից ծրագրված: Եւ, գործադրելով իրանց սովորական, Դաշնակցութեան մէջ քաղաքացիական իրաւունք ստացած միջոցները, նրանք կարողանում են հասնել իրանց նպատակին. և Կաթողիկոսը, որ ամբողջ 13 տարի լսել անգամ չէր կամենում ոչ մի եկեղեցական ժողովի մասին, որ ամբողջ 13 տարի կառավարում էր եկեղեցին միապետօրէն և նոյնիսկ դպրոցների մէջ մտցնում էր միապետական սկզբունքներ՝ նշանակել տալով հոգաբարձուներ, դարձաւ յանկարծ ամենաժողովրդասէր և շտապեց գումարել տալ ռուսահայոց եկեղեցական-պատգամաւորական ժողով մի այնպիսի ժամանակ, որ ամենից քիչ յարմար էր, և այնպիսի պայմանների մէջ, որոնք տալիս են լիակատար իրաւունք ասելու, թէ ընտրված պատգամաւորները բնաւ չեն կարող համարվել ռուսահայոց ժողովրդի կամքի և ցանկութիւնների արտայայտիչ: Եւ ճշմարիտ, եթէ լինէին իսկական, օրինաւոր, անկախ ընտրութիւններ, մի՞թէ հնարաւոր բան էր, որ մի Քարաշեան ընտրվէր իբրև պատգամաւոր Թիֆլիսի, կամ մի որևէ Յ. Դաւթեան—պատգամաւոր Շուշու: Հարցրէք 80,000 հայ բնակիչ ունեցող Թիֆլիսին և գուցէ չը գտնվեն 10 հոգի, որոնք իմանան, ծանօթ լինեն թէ ով է Քարաշեան և Տէր-Աւաքելեան: Նոյնը Շուշու և Կաղզւանի մասին: Ես սրանով որևէ վիրաւորական ակնարկ չեմ կամենում անել անձնին այդ պարոնների հասցէին, այլ հաստատում եմ միայն այն իրողութիւնը, որ պատգամաւորներից մեծ մասը, ըստ էութեան, նշանակովի են և բնաւ ոչ մի առնչութիւն չունեն այն գաւառների կամ վիճակների հայ ժողովրդի հետ, որոնց ներկայացուցիչները պէտք է համարվեն, հետևաբար և չեն կարող հայ ժողովրդի իղձերի և կարիքների արտայայտիչ լինել:

Ես, գնալով Էջմիածին, աչքի առաջ ունեմ ի միջի այլոց 1) բողոքելու ամենից առաջ Կաթողիկոսին և ժողովին, որ ռուսահայոց եկեղեցական առաջին պատգամաւորական ժողովը գումարվում է այդպիսի թերի, անկատար, ապօրէն պայմաններով և կամովի, որ Կաթողիկոսը, որոշելով գումարել այդ ժողովը, ինքնաբերաբար, թէ ազդեցութեան ներքոյ, չը կարգադրեց անհրաժեշտ միջոցները ձեռք առնել, որպէս զի ժողովը բաղկացած լինի իսկապէս հայ ժողովրդի ընտրեալ ներկայացուցիչներից, մշակել չը տուեց հրահանգներ ընտրութեան մասին, որոնք կարողանային ապահովել արդար, ազատ և գիտակցական ընտրութիւնը. 2) Թոյլ չը տալու, որ պատգամաւորական ժողովը դուրս գայ այն սահմաններից, որոնք ընդգծված են նրա համար յունիսի 7-ի կօնդակով, այն է դպրոցական, տնտեսական գործերը և թեմական ընտրութիւնները կարգաւորելու հարցերի շրջանից, որովհետև ներկայ պատգամաւորները ընտրված են միայն այդ լիազօրութիւնների սահմաններում. 3) համարելով ներկայ պատգամաւորական ժողովը լոկ իբրև մի խորհրդակցական կամ նախապատրաստական ժողով, որոշել գումարել մի օրինաւոր—ներկայացուցչական համազգային ժողով, մշակելով կանխապէս հրահանգներ և ընտրական մանրամասն կանոններ, որոնք ապահովէին ընտրութիւնների անկախութիւնը, ազատութիւնը, գիտակցականութիւնը:

Ահա, իմ կարծիքով, ինչ նպատակի պէտք է ձգտեն փոքրամասնութիւն կազմող (բայց իսկապէս ներկայացուցիչներ համարվող, որովհետև նրանց ընտրութիւնը եղել է գիտակցական և առանց ճնշման) պատգամաւորները, որոնք չեն ընտրված Դաշնակցութեան բիւրօկրատական կարգադրութեամբ և հետևաբար մեխանիկների կամ խրտուիլակների դեր կատարելուց ազատ են մնացել:

Հ. Առաքելեան

## ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

II

Երբ Էջմիածին գնացող պատգամաւորներին տրվելիք մանդատին եկաւ խնդիրը, դարձեալ խոր լռութիւն տիրեց:

Պ. Արասխանեան.—«Որչափ մեզ բոլորիս յայտնի է, այս ընտրութիւններին ամենից շատ աշխատել և ջանքեր է թափել Դաշնակցութիւնը. ուստի յայտնեցէք մեզ, վերջապէս, ձեր ծրագիրը, պարոններ, որ մենք էլ իմանանք, թէ ինչ էք մտածում դուք Էջմիածնի ժողովում անելու: Գուցէ ես էլ կը համաձայնեմ ձեզ հետ ու ինքս էլ քուէ կը տամ ձեր թեկնածուներին»:

Դարձեալ ոչ ոք չէ ուզում խօսել:

Մօտաւորապէս նոյն խօսքերով ծրագրի բացատրութիւն է պահանջում պատուիրակ Թագարբէգեանը, բայց էլի ոչ ոք տեղից չէ շարժվում:

Պ. Քալանթար—«Դուք ուզում էք մանդատներ տալ: Բայց մի՞թէ պատուիրակների ընտրութիւններ կատարելու ժամանակ դուք որոշ ծրագիր չէք ունեցել և այժմ նոր պէտք է մշակէք նրան: Եւ մի՞թէ պատգամաւորը լինելու է միայն մի յանձնակատար: Չէ՞ որ նա այնտեղ պէտք է մասնակցէ խորհրդակցութիւններին, իբրև ինքնուրոյն հայեացքների տէր մի՝ անձն: Ընտրվելիք պատգամաւորները այնպիսի հանրածանօթ անձնաւորութիւններ պիտի լինեն, որոնց վստահելով մենք կարողանանք մեր քուէները տալ, առանց նրանց նոր բացատրութիւններ տալու»:

Էլի մի երկու պահանջումներից յետոյ, վերջապէս վերկացաւ խօսելու պ. Հ. Օհանջանեանը: Հազիւ մի քանի խօսք ասաց, պ. Արասխանեանը հարցրեց, թէ արդեօք հռետորը իր սեփական կարծիքներն է արտայայտում, եթէ ոչ՝ մի որոշ մարմնի կողմից է խօսում: Նախագահ պ. Տ. Յովհաննիսեանը շտապեց յայտարարելու, թէ պ. Օհանջանեանի խօսածները մի խումբ մարդկանց (իմա «բիւրօյի») կարծիքների մասին մի զեկուցումն է: Այդ հանգամանքը, ի հարկէ, աւելի ևս լարեց ունկնդիրների հետաքրքրութիւնը:

«Նախ պէտք է ասեմ, որ այս ժողովը չէ կարող իմպերատիվ մանդատ տալ իր պատգամաւորներին, այսպէս սկսեց հռետորը, որովհետև իմպերատիվ մանդատ երբէք (?) չեն տրվում: Մենք կարող ենք միայն ցանկութիւններ յայտնել: Յետոյ պատգամաւորը պէտք է ժողովրդի ցանկութիւնների արտայայտիչը լինի, բայց դժբաղդաբար ներկայ ընտրողական պայմաններում այդ էլ անհնարին է ասել»:

Ինչպէս տեսնում էք, հռետորի այս վերջին դիտողութիւնը միանգամայն ճիշդ է, միայն թէ ընտրողական պայմաններ ասելով, նա միայն երկաստիճան լինելը յիշեց, առանց մի որևէ ակնարկ անելու անգամ, որ դաշնակցական բիւրօկրատները. Դուրնօվօյից էլ աւելի վատթար կերպով, թոյլ չէին տալիս այդ երկաստիճան ընտրութիւններն էլ ազատ ու խղճի մտօք կատարելու:

«Ես կարծում եմ,—շարունակեց պարոնը,—որ Էջմիածնում տեղի ունենալիք ժողովը հայ ժողովրդի կուլտուրական-հասարակական գործերի տեսակէտից ունենալու է վճռողական (մի՞թէ), կարևոր նշանակութիւն, և, թէև այդ ժողովը բացարձակ ժողովրդի իսկական ներկայացուցչութիւն չէ կարող համարվել, բայց և այնպէս ես այդ ժողովը համարում եմ ամենալաւը հայկական կենտրոնում Կովկասում»:

«Ասացի, որ այդ ժողովը ունենալու է կարևոր նշանակութիւն, որովհետև մենք այդ ժողովում պիտի ստեղծենք այնպիսի կարգեր, որոնք կարողանան նպաստել մեր ինքնուրոյն կուլտուրական զարգացմանը, հնարաւորութիւն տան մեր ազգային ինքնօրինութիւնը հաստատելու: Այդ ժողովը պիտի մեր ապագայ զարգացման համար ձևեր մշակէ»:

Կանգ առնենք մի րոպէ հռետորի խօսածների այս վերջին կտորի, նամանաւանդ վերջին նախադասութեան վրա, որը անհերքելիօրէն մատնում է դաշնակցականների բոլոր յետին մտքերը, Էջմիածնի ժողովի վրա դրած յոյսերը, նրանց հասարակական և քաղաքական խնդիրների մասին ունեցած հասկացողութիւնների կատարեալ բօբիկութիւնը, և միևնոյն ժամանակ պարզում է շատերի համար հանելուկ մնացած այն հարցը, թէ ինչու էին դաշնակցականները այնչափ գլուխ պատռում ընտրութիւնների ժամանակ:

«Բիւրօյի» կարծիքով, Էջմիածնի ժողովը պիտի մեր, այսինքն ռուսահայերի, թէկուզ հէնց միմիայն կովկասահայերի ազգային զարգացման համար ձևեր մշակէ, մեր ազգային ինքնօրինութեան եղանակը որոշէ:

Ոչ ոքի համար գաղտնիք չէ, թէ դաշնակցական դեմագօգները իրանց մէջ ինչպէս են որոշել կովկասահայերի ապագայ զարգացման ձևը ու ազգային ինքնօրինութեան եղանակը: Դա քաղաքական ֆեդերատիվ ձևն է, որին նրանք այնչափ սիրահար են և որ ամեն տեղ կրկնում են, չը կարողանալով սակայն պարզ կերպով տարբերել ֆեդերացիան աւտօնօմիայից և տեղական ինքնավարութիւնից: Բանից դուրս է գալիս, որ այժմ այդ ֆանտազիօր դեմագօգները կամենում են իրանց կուսակցական զառանցանքները Էջմիածնի ժողովում ձայների մեծամասնութեան ոյժով ամբողջ ռուսահայերի վզին փաթաթել և ժողովից յետոյ յայտարարել, թէ Ռուսաստանի ամբողջ հայութիւնը Դաշնակցութեան պաշտպանած ֆեդերատիվ կարգերի կողմն է:

Բոլորովին այլ խնդիր է, ի հարկէ, թէ դա աբսուրդ է, մի կատարեալ անհեթեթութիւն. որովհետև մի ազգային ժողովում, որը նամանաւանդ, ինչպէս իրանք էլ խոստովանում են, չէ էլ կարող ժողովրդի իսկական ներկայացուցչութիւն համարվել, որոշված քաղաքական խնդիրները երբէք չեն կարող բոլոր քաղաքական կուսակցութիւնների կողմից ընդունվել, քանի որ, ինչպէս շարունակ դասակարգային շահերի մասին խօսող դաշնակցականները պիտի գիտենան, բոլոր քաղաքական կուսակցութիւնները, ամեն մի քաղաքական լուրջ խնդրի վրա, իրանց ներկայացրած դասակարգերի շահերի տեսակէտից են նայում և, ուրեմն, դրանց մասին ընդհանուր ազգային տեսակէտ չէ կարող երբէք գոյութիւն ունենալ: Բայց մենք այնչափ ընտելացել ենք դաշնակցականների անհեթեթութիւններին, որ բոլորովին չը զարմացանք պ. Օհանջանեանի աբսուրդները լսելով:

Ահաւասիկ մի այլ նմուշ:

«Ինչպէս յայտնի է, ներկայումս կառավարութիւնը հայ ժողովրդից հարկեր է վերցնում դպրոցական և այլ կուլտուրական ծախսերի համար, բայց նա այդ վերցրած հարկերը անարդար կերպով է գործադրում: Մենք ապագայում յեղափոխութեան միջոցով կապահովենք մեր ազգային ինքնօրինութիւնը և բիւջէից կը ստանանք մեզ հասանելիք մասը՝ կուլտուրական գործերի համար»:

Են, լաւ. թէ որ յեղափոխութեան միջոցով մենք պիտի ապահովենք մեր ազգային ինքնուրոյնութիւնը, ապա Էջմիածինն ու Կենտրոնական ժողովը ինչ կապ ունեն գալիք յեղափոխութեան հետ: Մի՞թէ այդ ժողովը Դաշնակցութեան համագումարն է, որտեղ յեղափոխութեան տաքտիկա պիտի մշակել: Այդ դէպքում ինչո՞ւ նրան ազգային ժողով անուանեցիք և գիւղ ու քաղաք իրարու գլխի տուեցիք մի ինչ-որ ընտրողական կոմեդիա սարքելու համար, այսպիսի դաժան ու տակնուվրայ ժամանակներում: Բացի դրանից, ինչ են նշանակում «բիւջէից կը ստանանք մեզ հասանելիք մասը՝ մեր կուլտուրական գործերի համար» խօսքերը: Ինչպէս ոչ-պատուիրակ պ. Ա. Երզնկեանը իր պատասխանի մէջ շատ իրաւացի կերպով նկատեց, որ կուլտուրական ամենամեծ գործը ներկայ դարում հաղորդակցութեան միջոցներն են՝ երկաթուղի, խճուղի, հեռագիր, պօստ, հեռախօս: Արդ՝ ինչպէս կարող են թուրքերի և այլ ազգերի հետ ամեն տեղ խառն ապրող հայերը իրանց համար յատուկ երկաթուղիներ, յատուկ հեռագիր, պօստ և այլն շինել ու դրանց համար ընդհանուր բիւջէից բաժին պահանջել: Ախր դա էլ մի կատարեալ աբսուրդ է: Դաշնակցական ֆօլկսանիկ չէֆերը, օգտվելով հայ մասսաների միամտութիւնից ու տգիտութիւնից, շարունակ Ունգարեան, Մօրավեան և այլ այդ կարգի եւրոպական երկրներն են օրինակ բերում ու հասարակութեան աչքին թող փչում: Բայց պարոնները երբէք «զահմաթ» չեն քաշում մտածելու, որ այդ ազգերը որոշ տերրիտօրիա, զուտ ազգաբնակչութիւն ունեն և երբէք հայերի ու հրէաների նման միւս ազգերի հետ խառը բնակչութիւն չեն կազմում: Ունգարիայի, Մօրավիայի, Լեհաստանի և այլ այդ կարգի երկրների հետ կարելի է միայն Կովկասը համեմատել իր ամբողջութեամբ և ոչ թէ նրա մէջ ապրող խառը ազգաբնակութիւններին միմեանցից բաժանել ու նրանց իւրաքանչիւրի առանձին, բոլորովին անկախ և ընդարձակ կուլտուրայի մասին զառանցել:

«Մեզ ասում են,—շարունակեց զեկուցանել պ. Օհանջանեան,—թէ ինչպէս պիտի վճռէք կրօնական-եկեղեցական հարցերը: Այդ խնդիրների վերաբերեալ մեզ համար ցանկալի է, որ եկեղեցին բաժանվի պետութիւնից, և եկեղեցիով ու նրա գործերով զբաղվեն միմիայն հաւատացեալները, իսկ ոչ-հաւատացեալները ազատ լինեն եկեղեցուց. ոչ սրանք խառնվեն եկեղեցու գործերին և ոչ էլ կրօնաւորները խառնվեն վերջինների գործերին»:

Շատ տեղն է այստեղ յիշելու ռուսական առածը. «Слышали звонъ, да не знаютъ гдѣ онъ»: Շէֆ-աղաները լսել են, թէ աշխարհի երեսին գոյութիւն ունի մի ինչ որ եկեղեցին պետութիւնից բաժանելու հարց, բայց չը գիտեն, թէ ինչումն է կայանում դրա էութիւնը: Ախր այդ ինչ պետութիւնից պիտի բաժանել «հայոց առաքելական սուրբ եկեղեցին» Հայկական պետութիւնից: Բայց չէ՞ որ այդպիսի պետութիւն գոյութիւն չունի: Իսկ եթէ խօսքը ռուսաց պետութեան մասին է, այդ պարագայում մի՞թէ պ. պ. դաշնակցականները մոռացել են, որ այդ պետութեան բարձրագոյն իշխանութիւնը Պետերբուրգումն է, և ոչ թէ Էջմիածնում: Ինչո՞ւ ուրեմն ռուսաց պետութիւնից եկեղեցին բաժանելու համար Էջմիածին վազել և ոչ Պետերբուրգ: Մի՞թէ նրա համար միայն, որ թէ ճանապարհածախսը էժան է և թէ աւելի անվտանգ:

Յետոյ՝ ինչ է նշանակում. եկեղեցին թողնել հաւատացեալներին և կրօնաւորները այլևս չը խառնվեն ոչ-հաւատացեալների գործերին: Եւրոպական երկրներում այդպիսի պահանջ դնողները այն են հասկանում, որ ոչ-հաւատացեալները կարող են քաղաքագլխի մօտ կամ գիւղական տանուտէրի մօտ քաղաքացիական ամուսնութեամբ պսակվել, երեխաներին չը մկրտել, առանց քահանայի թաղել և այլն: Են, կարո՞ղ են հիմա հայերը, որչափ էլ ազատ լինեն նրանք, այդպիսի կարգ ու կանոններ ստեղծել իրանց համար, շարունակելով ռուսաց պետութեան մի մասը կազմել: Կարո՞ղ են նրանք, օրինակի համար, քաղաքացիական ամուսնութեամբ պսակվել, քանի որ ընդհանուր պետութեան օրէնքով միմիայն եկեղեցական պսակով եղած ամուսինների զաւակներն են իսկական ժառանգներ ճանաչվում: Ուրեմն, ինչպէս կարելի է այդպիսի լուրջ, ընդհանուր պետական բնաւորութիւն կրող խնդիրները Էջմիածնում լուծել: Ինչո՞ւ ինքնախաբէութեամբ պարապել ու ամբողջ երկու և աւելի ամիս հայ ժողովրդին դօնքիշօտութեամբ զբաղեցնել: Մի՞թէ սխալված էր Խանդամիանը, որ, ձեր այդ աբսուրդ ու դօնքիշօտային ծրագիրը լսելով, ասաց, թէ դուք Աֆրիկայից եկածներին էք նմանում: Գուցէ նա սխալվում էր միմիայն այն տեսակէտից, որ Աֆրիկայում ապրողները մեր կեանքի իրականութեան ու պայմանների մասին աւելի լուրջ հասկացողութիւն ունեն, քան դուք, Կովկասում ապրողներդ: Ոչ թէ Աֆրիկայից, այլ լուսնի վըրայից եկածների են աւելի նմանում Դաշնակցութեան ղեկավարները:

Խ.

(Կը շարունակվի)

## ԲՈՐՉԱԼՈՒԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

Բորչալուի գաւառապետ Բէգանօվին Գորի տեղափոխելը սաստիկ յուզելով գաւառի հարիւր հազար քրիստոնեայ ազգաբնակութիւնը, իսկոյն ռուսները, հայերը, վրացիք, մօլօկանները ու գերմանացիք իրանց կողմից ընտրելով մի պատգամաւորութիւն 75 մարդուց, ուր կային և 2 քահանաներ, ուղարկել էին Փոխարքային խնդրելու, Բէգանօվին չը տեղափոխելու ուրիշ տեղ, որովհետև իրանք շատ գոհ են նրանից:

Ուրախ էին գալու և գաւառի թուրք գիւղացիները, սակայն նրանք իրանց գազան բէգերի սպառնալիքներից վախելով չեկան: Պատգամաւորները, ժողովվելով Վանքի մայր եկեղեցու բակը, ժամի 11-ին միասին գնացին Նահանգապետի տունը: Նահանգապետը տանը չը լինելով, պատգամաւորները սպասեցին դուրսը, փողոցում, մինչև նրա գալը: Կէս ժամ չանցած, հէնց այդ փողոցով անցաւ գեներալ Նահանգապետը, որի կարգադրութեամբ առաջարկեցին պատգամաւորներին իսկոյն ցրվել, միայն մնալով 15 մարդ: Վերջապէս եկաւ Նահանգապետը, ընդունեց պատգամաւորներին ու հրամայեց, որ այսուհետև մեծ բազմութեամբ պատգամաւորներ չը գան, որովհետև շատ մարդիկ ամբոխ են և ոչ պատգամաւորներ: Նահանգապետը հարցրեց թէ, ո՞վ են իրաւունք տալիս խօսելու. բոլորն էլ պատասխանեցին, որ իրաւունք են տալիս խօսելու պ. Վ. Մեհրաբեանին: Պ. Մեհրաբեանը խնդրեց Նահանգապետին միջնորդելու Փոխարքային, որ ընդունէ իրանց ու ինքն էլ միջնորդէ Բէգանօվին չը տեղափոխել Գորի, որովհետև ժողովուրդը սաստիկ յուզված է, որ Բէգանօվին տեղափոխելով զրկում են գաւառը այն միակ գրաւականից, որի շնորհիւ գաւառում մինչև հիմա արիւնհեղութիւններ չեն եղել, ու նամանաւանդ, Բէգանօվին թողնելով մեր գաւառում, ժողովուրդը կը համոզվի, որ բարձր իշխանութիւնը չէ ուզում, որ մեր գաւառում կոտորած առաջ գայ:

Նահանգապետը պատասխանեց, որ ինքը հէնց նոր է գալիս Փոխարքայի մօտից. Փոխարքան չէ կարող հայերի պատճառով իր կարգադրութիւնը փոխել, և «ես իմ կողմից ինձ թոյլ չեմ տայ խնդրելու, որ Փոխարքան ձեզ ընդունէ կամ Բէգանօվին չը տեղափոխէ, որովհետև հէնց այսօր տարայ Փոխարքայի մօտ ձեր նոր գաւառապետ Լէօնտիեվին, որին Փոխարքան խրատեց արդար վերաբերվել գաւառի բոլոր ազգաբնակութեան, և իսկոյն կանչեց նոր գաւառապետին ու ներկայացրեց պատգամաւորներին և հրամայեց նրան հաւատարիմ ծառայել Թագաւորին ու հայրենիքին»:

Պ. Մեհրաբեան պատասխանեց, որ խնդրատուները միայն հայերը չեն, այլ բոլոր քրիստոնեաները ու ազգաբնակութեան մեծամասնութիւնը, որոնք կարծում էին, թէ բարձր իշխանութիւնը պէտք է ուրախ լինի, երբ իրանց պաշտօնեային յարգում է ժողովուրդը, որից թանգ գնահատութիւն չը պէտք է լինի իւրաքանչիւր օրինաւոր մարդու համար էլ: Եթէ Եղիզարօֆների խնդիրներով կարելի է գաւառապետին տեղափոխել, մի՞թէ հարիւր հազար ժողովրդի խնդրքով չէ կարելի գաւառապետին թողնել իր պաշտօնում. չէ՞ որ գաւառապետն է ժողովրդի համար և ոչ ընդհակառակը: Նահանգապետը նորից հասկացրեց, որ գաւառապետները նշանակվում ու տեղափոխվում են ոչ ժողովրդի ցանկութեամբ:

Պ. Մեհրաբեանցը պատասխանեց, թէ իրանք համոզված են, որ յանցաւոր մարդիկ աւելի յարգի են, նամանաւանդ տխրահռչակ Եղիզարօֆները, որոնք զուր չէին պարծենում, որ գաւառի տէրը իրանք են և ոչ Բէգանօվը: Նահանգապետը Եղիզարօֆների յանցաւորութեան համար փաստեր պահանջեց: Պ. Մեհրաբեանը մի քանի փաստեր թւելուց յետոյ աւելացրեց, որ հարիւր հազար ժողովրդի ձայնը մի՞թէ փոքրիկ փաստ է:

Ապա խօսեցին ռուսները և մօլօկանները, որոնք ապացուցեցին, որ աւազակաբարոյ թուրքերից իրանք էլ վնասվում են: Ահա այս բոլոր կոմեդիաներից յետոյ գիւղացիները քօռ ու փօշման ցրվեցին ու ճանապարհ ընկան իրանց գիւղերը:

***

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՈՀԵՐ

I

Հայոց ուսումնարանների ուսուցչական համագումարը վերջացրեց իր նիստերը և ցրվեց:

Համագումարի երևոյթը, ինքնըստինքեան, մի շատ մխիթարական փաստ է, և հազիւ թէ նրա օգտակարութեան ու անհրաժեշտութեան դէմ առարկողներ լինեն:

Սակայն ով ուշի ուշով հետևել է համագումարի նիստերին, չէ կարող նրա ներկայ նստաշրջանը անաջող չը համարել:

Համագումարը ունեցաւ բաւականին երկարատև նիստեր, ժամանակ գտաւ իր նիստերի մեծ մասը նուիրելու կոչմական, մանաւանդ թէ հասարակական բնաւորութիւն ունեցող հարցերի, մշակեց ու հաստատեց, մասամբ, «ուսուցչական պրօֆեսիօնալ» միութեան ծրագիր և ցոյց տուեց իրան իբրև մի կազմակերպված, կօմպակտ ոյժ, պատրաստ մաքառելու ուսուցչական աշխատանքի շահագործութեան դէմ:

Այսուհետև հայ հասարակութիւնը պարտաւոր է հաշուի առնել այդ ոյժը ոչ միայն իբրև մտաւոր, այլ և իբրև հասարակական ոյժի, իր դպրոցների աջողութիւնը ի նկատի առնելով:

Այնուամենայնիւ չենք կարող մոռացութեան տալ այն յանցաւորութիւնը, անփոյթ վերաբերմունքը, որ ցոյց տուին «հայոց ուսումնարանների» ուսուցիչները դէպի այն դպրոցը, որին ծառայելու կոչված են իրանք: Ես, ի հարկէ, չեմ ուզում ասել, որ նրանք խօսէին ծրագրային հարցի և դաստիարակութեան եղանակի մասին, բայց կարծում եմ, որ ուսուցիչները պարտաւոր էին շօշափել ու որոշել ուսուցչի դերը թէ դպրոցում և թէ հասարակական ասպարէզում: Այդ խնդրի որոշումը կը լինէր ուղեցոյց ուսուցչական կորպօրացիային պատկանող այն անդամների համար, որոնք, փոխանակ ծառայելու կրթական գործին, դպրոցի շահերին, նետվում են բուռն թափով հասարակական ասպարէզը: Եւ, բնականաբար, հասարակական հոսանքների հետ ընդհարվելուց յետոյ, դպրոց են բերում իրանց հետ այն թոյնը, որ հետզհետէ հիւծում է դպրոցական բեղմնաւոր ու համբերատար գործունէութիւնը:

Եւ եթէ համագումարը չէ նայում ժողովրդական դպրոցների վրա այն հայեացքով, ինչ հայեացքով նայում է շահագործվող բանւորը ինդուստրիայի կամ կապիտալի վրա, ապա ուրեմն մեր մի քանի դպրոցներում ուսուցիչների շնորհիւ ստեղծված դէպքերը չը պէտք է վրիպէին նրա ուշադրութիւնից:

II

Անցեալ ուսումնական տարին մեզ համար մի քանի ցաւալի օրինակներ թողեց:

Մի տեղ տարւայ կիսին դպրոցները ընդհատեցին իրանց գործունէութիւնը: Հարիւրաւոր մանուկների առաջ փակվեցին դպրոցի դռները, և խեղճ ու անմեղ մանուկները մնացին փողոցում:

Եթէ մենք ընդունակ ենք զայրանալու, բողոքելու այն պատճառով, որ դպրոցը գործնում են փողոց, ապա ինչ կը լինի այն ծնողների դրութիւնը, որոնց մանուկներին ձգել են հէնց ուղիղ փողոցի մէջ:

Շատ անգամ, շնորհիւ այն հանգամանքի, որ ուսուցիչները դպրոցի շահերը ստոր են դասում քան իրանց կուսակցական աններողամտութիւնը, ամբողջապէս վնասվում է կրթական գործը, տուժում են աշակերտները, սառչում է ժողովրդի հաւատը, վստահութիւնը դէպի ուսուցիչները:

Մեղաւորը, ի հարկէ, ժողովուրդը չէ: Ամեն մի ուսուցիչ, դպրոց մտնելով, պէտք է թողնէ իր կուսակցական նպատակներն ու անձնական հաշիւները և ամբողջապէս նուիրվի դպրոցի պահանջներին, նրա կրթական գործի աջողութեանը: Սա, ի հարկէ, տարրական, հանրամատչելի ճշմարտութիւն է, բայց հարցը նրանումն է, թէ ամենքն են հետևում այդ ճշմարտութեանը: Գոնէ ինձ թւում է, որ ոչ: Ապա թէ ոչ ինչո՞ւ պէտք է ստեղծվէր այն քաօսը, որ տիրել է և դեռ տիրում է մեր դպրոցներից շատերի մէջ: Մի՞թէ կարելի է ժխտել, որ մեր նորաբաց դպրոցները անցեալ տարի անձնական և թայֆայական շահատակութիւնների ասպարէզ դարձան:

Կամայականութիւնը և ճնշումը հրահանգիչ է դառել ոչ միայն դպրոցից դուրս, այլ և դպրոցի ներսը: Բնական է ուրեմն, եթէ այդպիսի պայմաններում իրականութիւն են ստացել դպրոցական հետևեալ քօմիկ էսկիզները:

Դ-ի դպրոցի աւագ ուսուցիչը, շեղվելով իր վրա դրված բուն պարտականութիւններից, եռանդուն կերպով սկսում է գործել հասարակական ասպարէզում և կուսակցական պայքար մտել:

Ի հարկէ այդ նրա անհատական գործն է:

Սակայն դպրոցը պահանջում է տալ իրան այն, ինչ նա պարտաւոր է տալ թէ իբրև ուսուցիչ և թէ իբրև աւագ ուսուցիչ:

Ուսումնարանը բաւարարութիւն չէ ստանում, և, պարզ է, կրթական գործը կաղում է:

Մինչդեռ պարոնը, գերազանցելով կուսակցութեան ագիտատօրի աջողութիւնը դպրոցինից, յենվելով իր կուսակցական հմայքի ու զօրութեան վրա, գործում է յաղթապանծ: Դրսում կրած անաջողութեան կամ դժգոհութեան վրէժը նա տեղափոխում է դպրոց և լուծում է իր կօլլեգա, բայց ոչ համախոհ, ընկերներից: Աջ ու ձախ հայհոյում է նրանց անուանելով «իդիօտներ»: Երբեմն վարժուհիների հասցէին նետում է լկտի ակնարկներ, նկատելով որ նրանց «արտաքինին նայելով է ընտրութիւն կատարել», որ պաշտօն է տուել, որովհետև «սիրուն են»:

Անհաւատալի է թւում, բայց, իրօք, իրական փաստեր են:

Ինչպէս երևում է, այդ էպիտետները արդէն սովորական երևոյթ են դարձել այնտեղ, և կամ միւս ուսուցիչները վախենում են այդ տխրահռչակ հերոսից, ապա թէ ոչ՝ ինչով բացատրել, որ ուսուցչական երկսեռ կազմի մէջ չը գտնվեց մի բողոքող անգամ, որ երևան հանէր այդ աւագ ուսուցչի այլանդակ պատկերը, չը բողոքեց նրա այն վարմունքի դէմ, որ դպրոցը դարձրեց խաղալիք իր քմահաճոյքի համար:

Եւ մի՞թէ հէնց այս փաստը մի տխուր, ցաւալի երևոյթ չէ, որ շօշափում է ուսուցչական կորպօրացիայի պատիւը:

Ժողովուրդը իր դատավճիռը տուեց: Ուսուցչական նախկին խմբի մեծ մասը արտաքսված է յիշեալ դպրոցից, իր լիդերի հետ միասին, որի հասարակական գործունէութեան վրա մի սև խաչ քաշեց, ընտրութիւններին սևացնելով: Ինքնըստինքեան դա մի շատ խրատական փաստ է:

Մօտենում է նոր ուսումնական տարին. անցեալի փորձերից պէտք է օգուտ քաղել, համերաշխ ոյժերով կանգնեցնել դպրոցը իր կոչման բարձրութեան վրա և վաստակել նորից ժողովրդի վստահութիւնը: Հարկաւոր է ըմբռնել, վերջապէս, որ դպրոցի շահերը, կրթական գործի աջողութիւնը աւելի բարձր են, աւելի վսեմ և սուրբ, քան անձնական ու կուսակցական շահերը: Պէտք է խնայել, փայփայել դպրոցը և նեղ կուսակցականութիւնը, աններողամիտ ոգին դուրս քշել կրթութեան ասպարէզից:

Լ. Դանիէլեան

## ՄԻ ԿՈՉ ՋԱՆԿԵՑԻՆԵՐԻՆ

—

Հին-Նախիջևանի հետ հաղորդակցութիւն ունեցող ամենագլխաւոր ճանապարհներն են Դարալագեազից եկողը, որը անցնում է անմիջապէս Ջանկի միջից, և Զանգեզուրից եկողը, որը Բիչանակ մօլօկանական գիւղից անցնելով, շարունակ թուրքական գիւղերից, գալիս է մինչև Կրզըլ-Բօղազ կոչված կիրճը, որը գտնվում է նոյնպէս Ջանկի դիմաց և ամենավտանգաւոր տեղն է. դա միակ ճանապարհն է, որը կարելի է դուռ կոչել. թուրք անհանգիստ տարրը, այդ կիրճում դիրք բռնելով, մեծամեծ վնասներ է պատճառում ճանապարհորդներին, նոյն իսկ քանիցս անգամ 10—15 հոգուց բաղկացած զինված ռուս զինւորների ձեռքից խլել են հացի պաշարով բարձած բեռնակիր գրաստները և միանգամայն ահ ու սարսափ տարածելով՝ հաղորդակցութիւնը դադարեցրել: Յիշեալ երկու ճանապարհների բաց կամ փակ լինելը մեծ կախումն ունի Ջանկի հայութիւնից. եթէ Ջանկում հայերը ուժեղ են, ճանապարհները բաց կը լինեն և երթևեկութիւնը ազատ, իսկ եթէ հայերը թոյլ են և վախկոտ, թուրքերը անմիջապէս ճանապարհները փակում են: Ուրեմն, կասկած չը կայ, որ եթէ Ջանկը մնայ միմիայն թուրքերին և հայերը դուրս գան այդտեղից, ինչպէս ինքնաբերաբար և ինքնայօժար կամքով հեռանում են, այն ժամանակ վստահ կարող ենք ասել՝ որ թէ Դարալագեազի և թէ Զանգեզուրի ու Նախիջևանի լեռնային մասի յարաբերութիւնները բոլորովին կը կտրվեն Նախիջևանից և կը դառնան կղզիացած երկիրներ:

Մի կողմից այդ երկիրների ընդհանուր շահերն ի նկատի ունենալով և միւս կողմից նոյն իսկ իրանց հարազատ հող ու ջրից չը զրկվելու համար, հրաւիրում ենք Նախիջևան աւերակ գաւառի պանդխտութեան դիմած բոլոր հայերին, նամանաւանդ ջանկեցիներին, լուրջ մտածել և օր առաջ շտապել իրանց ծննդավայրերը՝ քաջալերելու և հաստատելու իրանց աւերված եղբայրներին հայրենի հողի վրա՝ մինչև կատարեալ անդորրութիւն տիրէ մեր երկրում:

Հայրենակիցներ, մի մերժէք իմ այս քաղցր առաջարկը, յիշէք պապերի և ազիզների նուիրական յիշատակները, որոնք ձեր բացակայութեան շնորհիւ անհետ կը կորչեն. Իսկ եթէ հայրենիքում հաւաքված մի ոյժ ներկայացնէք, առաջին՝ որ անվտանգ պահպանած կը լինէք պապերից մնացած աւանդը և երկրորդ՝ մեր հայրենակից թուրք անհանգիստ տարրը իր դիմաց մեծ ոյժ տեսնելով չարութիւն չի անի, և մեր դժոխք դարձած հայրենիքը կը հանգստանայ ու կը խաղաղվի:

Յիշեցէք հայկական այն առածը, որ ասում է. «Դուռդ փակ պահէ, հարևաններիդ գող մի բռնէ»:

Ես գիտեմ, այժմ կը մտածէք թէ՝ «այս ինչ անհնարելի դրութիւն ստեղծվեց մեզ համար, գնալ ունեցուածքն ամուր պահել, որ հարևաններիս գող չը բռնենք. անհրաժեշտ է, բայց որ մեր ընտանեաց կերակրելու համար հաց է հարկաւոր և ձմերային ցրտերից պաշտպանվելու համար միջոցներ պէտք է ձեռք առնել, որոնցից մենք զուրկ ենք»:

Այդ հարցերին ես կը պատասխանեմ. անհոգ կացէք, մեր հայ եղբայրները արթուն աչքերով դիտում են և չեն թոյլ տայ սովից կամ ցրտից կոտորվելու. ինչպէս մինչև հիմա մի քանի միլիօններ են նուիրել ձեր պաշտպանութեան համար, նոյնպէս և այսուհետև կը պաշտպանեն, միայն թէ դուք ունեցէք կամքի հաստատութիւն ու քաջութիւն՝ վճռել և շտապել դէպի հայրենիք. ձեր խոպանացած սև հողը ձեզ է կանչում:

Շահապ.

Թիֆլիս, 11 օգոստոսի

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՇՈՒՐՋԸ *)

(Մի հոգևորականի կարծիք ևս)

—

Խնդրի բազմակողմանի մշակումը՝ կը նպաստէ ուղիղ լուծման. ինչ փոյթ որ տարբեր լինեն իմ կարծիքները:

Վեհափառ Հայրապետը իր «սահմանադրական» անուանեալ կոնդակներով (մայիս 10, յունիս 7 և 30) ցանկանում է տալ ռուսահայ ժողովրդին նոր արտօնութիւններ: Այդ առթիւ Ս. Էջմիածնի 14 միաբաններ երկու խնդրագիր ներկայացրին Նորին Վեհափառութեանը: Միաբանութեան ժողովին չը ցանկացայ մասնակցել՝ մի քանի յարգելի պատճառներ ունենալով: Առաջին խնդրագրի մէջ գոնէ մի հատիկ ուղիղ սկզբունք կայ: Իսկ երկրորդ խնդրագրով՝ այդ մի սկզբունքն էլ ոչնչացնելուց զատ, իրանց կոչման անգիտակից եպիսկոպոսները խնդրում են ընտրող և ընտրուող լինելու շնորհ:

Վեհափառ Կաթողիկոսը մեծահոգութեամբ կանխելով շնորհեց, ինչպէս և 21 տարեկան աղջիկներին, նրանց խնդրած այդ արտօնութիւնը. տես երրորդ կոնդակը:—Վաղարշապատի ծխ. եկեղեցու. քահանան հրաւիրագիրը ուղարկեց և ստացան եպիսկոպոսները՝ ներկայ յուլիսի 9-ին պատուիրակների ընտրութեան ժողովին մասնակցելու համար:

Կալուածքների գրաւման առթիւ ժողովներից սկսած՝ այս առաջին անգամը չէ, որ միաբանները խմբովին ապացոյցներ են տալիս համոզվելու՝ թէ սրանք...

Յիշեալ երեք կոնդակներով յարուցուած և մամուլի մէջ արծարծուած հարցերի մասին՝ ահա և իմ ամփոփ կարծիքները, յենուած մեր եկեղեցական կանոնների կամ սրանցից բղխող օրէնքների վրայ —

ա) Ամենայն Հայոց Կաթողիկոսը իրաւունք չունի Հայրապետական Գահին և Իւր անձին վերապահուած արտօնութիւնները օտարացնել կամ տալ այլոց:

բ) Ոչ Ինքը Կաթողիկոսը իրաւունք ունի և ոչ կարող է կենտրոնական ժողովին իրաւունք տալ՝ «կարգադրելու և տնօրինելու... բոլոր եկեղեցական գործերի վերաբերութեամբ»:

գ) Կենտրոնական ժողովը ինքը, բայց եթէ դա իբրև տեղական ժողով՝ պիտի փոխարինէ ազգ. եկեղ. ժողովի, իրաւունք ունի մասնակի ռուսահայոց եկեղեցական գործերի վերաբերմամբ տնօրինելու և կարգադրելու: Սակայն այդպիսի ժողովին անդամակցելու համար՝ իւրաքանչիւր եպիսկոպոս իրաւասու է. նա ոչ ընտրուում է և ոչ ընտրում ժողովական լինելու համար: Մնում է, որ ժողովի նախագահը եպիսկոպոսաց հրաւիրագրով ծանուցանէ և յայտնէ եպիսկոպոսներին ժողովի տեղը և ժամանակը. այլ և հրաւիրէ մասնակցելու գիտակ վարդապետներին և երէցներին:

դ) Սխալ է և սուտ, բայց մի գեղեցիկ թիւրիմացութիւն, թէ եկեղեցու հոգևոր պաշտօնեաները ընտրուում են. մի՛ զարմանաք. ժողովրդական ընտրութիւնը, եկեղեցական գործերում, նիւթականի՝ տնտեսութեան մատակարարութեան պաշտօնեաների համար է առաքելոց ժամանակից, օրինակ, Ստեփաննոսի և ընկերների ընտրութիւնը, որպիսի պաշտօնը վաղուց անցել է մեր երէցփոխաններին և դպրոցական հոգաբարձութիւններին և որոնք ընտրուում են և պաշտօնավարում ընդ իշխանութեամբ առաջնորդի: Կաթողիկոսի ժողովրդական ընտրութեամբ լինելը հետևանք է քաղաքական և այլ ներքին անխուսափելի պահանջների, իսկ քահանայի ընտրութիւնը պատահական և միայն վերջին տարիների բան է:

ե) Ս. Էջմիածնի եպիսկոպոսներին և վարդապետներին ո՛ր ժողովրդական ընտրողը կարող է քաջ ճանաչել, քան մեր Կաթողիկոսները. եթէ մի կողմից՝ հնար գտնուէր վերջիններիս ազատ պահել ընչաքաղց հաջիների, աղաների, էֆէնդիների, ձեռնասունների ազդեցութիւնից. միւս կողմից՝ կարգաւորեալ կազմակերպուէր Կաթողիկոսական Դիւանը, և սահմանուէր կօնտրօլ և պատասխանատուութիւն՝ խառն ժողովրդական երկսեռ ընտրեալ իշխանների և եպիսկոպոսաց ատենի առաջ: Հակառակ դէպքում՝ միակ լաւագոյն ապահով միջոցն է հոգևոր պաշտօնեաների ընտրութիւնը, և Կաթողիկոսին ազատ կացուցանել վանքական տնտեսութեան և հասարակաց որ և է գրամական հաշուի մէջ խառնուելու պարտաւորութիւնից. այլ և իրաւունքների սահմանները ճշդել:

---

*) Արտատպում ենք Բարդուղ. եպիսկոպոս Գէորգեանի առանձին թուցիկով արտատպած այս գրութիւնը: Ս. Թ.

գ) Անցած 1905 թ. Բարձրագոյն Նախահաւանութեամբ Փոխարքայի տուած ժամանակաւոր կանոնից յետոյ, սահմանադրութիւն թէ այսօրուան եկեղեցական (թէ՛ հոգևոր և ժողովրդական) իշխանութիւնը՝ մի և նոյն է գրեթէ. դժգոհութեան պատճառները միայն,—օրէնսդրական և վարչական կամայականութիւն,—պէտք է իսպառ խափանել և վերացնել:

է) Ամէն ոք պարտական է նպաստել կենտրոնական ժողովի գլուխ գալուն սկիզբը դնելուն և արգիւնաւորելուն: Կենտրոնական ժողովը պիտի շինէ, ամրապնդէ և ոչ թէ քանդէ, պիտի զանայ ոտնձգութիւնների, կամայականութիւնների, տրտունջների և, յատուկ. ժամանակակից աղէտների խափանող մեր եկեղեցական խորհուրդը (դումա), որից գոհ պիտի մնան հոգևորականը, աշխարհականը և երկրի տիրող իշխանութիւնը միանգամայն:

Ուրիշ տեսակի ժողովը, առ նուազն, եկեղեցական ազգային չը լինելով, հետևաբար և նրա որոշումները կանոնական և պարտաւորիչ չեն կարող լինել Եկեղեցու համար:

Բարդ. եպիսկ. Գէորգեան (Ծուղուրեանց)

## ՆԱՄԱԿ ՇՈՒՇԻՑ

Օգոստոսի 8-ին

Օգնեցէք իբրև սուրբ պարտականութիւն:

Անշուշտ յայտնի է ամեն լրագիրներից ամեն մի հետաքրքրվող հայի, ինչ որ կատարվել է Շուշում յուլիսի 12-ից մինչև 17-ը և 21-ի կոտորածը մինչև 22-ի երեկոն. այս կոտորածները Շուշուն շատ վնասներ հասցրին նիւթական և անձնական. Շուշու հայութիւնը շատ զրկանքներ քաշեց, շատ նեղութիւն ընդունեց իր վրա. շնորհակալութեան և գովասանքի արժանի են այն հաստատաբնակ հարուստ և աղքատ շուշեցիները, որոնք իրանց երկրի փուշը աւելի գերադասեցին, քան օտար երկրի վարդը. միայն հայրենիքում և այսօր տանելով ամենայն մի նեղութիւն, յուսով են, որ իրանց բնիկ իրաւազուրկ հայրենիքում էլ կը լինի խաղաղութիւն և արդարութիւն: Փառք և պատիւ այն անձնուրաց մարտիկներին, որոնք մոռանալով իրանց անձը և ընտանիքը, կռուի առաջին վճռական րոպէից նետվեցին կրակի մէջ, որ այդ կրակից հանեն և բարձրացնեն հայութեան պատիւը. մենք պարտական ենք շնորհակալութիւն յայտնել իւրաքանչիւր ազնիւ մարտիկին, իսկ ընկածների յիշատակը պիտի փառաբանենք: Բայց մենք ունենք աւելի սուրբ և ազնիւ պարտականութիւն. մենք հայերս եթէ իրաւունք ունենք մեզ անուանելու կուլտուրական ազգ, պիտի իմանանք և պարտաճանաչութիւն: Շուշում մշտական ապրող հայը չը խնայեց իր վերջին կոպէկը, իր կեանքը, միայն թէ բարձր պահէ քրիստոնէութեան և հայութեան պատիւը. և եթէ այսօր շուշեցին միջոց ունենար օգնելու, չէր դիմի գրով օգնութեան. բայց որովհետև երկիրը շարունակվող ընդհարումներից քայքայվել է, ոչ մի օգուտ և գործ չը կայ, սփիւռած ձեզ են դիմում շուշեցիք, ով օտարութեան մէջ ապրող ղարաբաղցի զաւակներ, փութացէք, օգնութեան հասէք արիւնաքամ հայրենիքի որբ զաւակներին. գերդաստանի հայրը մեռաւ, կատարելով իր պարտքը դէպի իր ազգը և ընտանիքը. պատիւը զոհ էր պահանջում, նա տուեց կեանքը, թողնելով չոր հացի կարօտ ընտանիքը պարտաճանաչ հայի խնամքին և հոգացողութեան: Ուստի այդ նահատակների ընտանիքները ձեր առատ նուէրներին են կարօտ, ով ղարաբաղցի մայրեր և հայրեր. գոնէ տառապողները կը հասկանան և կը համոզվեն, որ նեղութեան, քաղծութեան օրերում նրանց ապաւէն և պաշտպան կայ, այնպէս, ինչպէս գերդաստանի հայրը, նահատակ զինուորը պաշտպանեց ազգային պատիւը և ուրիշի անձը: Հաստատ համոզված եղէք, որ նորից պիտի վերադառնաք ձեր հայրենիքը, որը ցօղված է հերոսների արիւնով. բայց այդ արիւնը յիշելիս չէք սարսափի ձեր խղճի խայթոցից, որովհետև կը յիշէք, որ դուք էլ ձեր սուրբ պարտքն էք կատարել, նիւթապէս օգնած լինելով ընկած զոհերի որբերին: Նուիրատուութիւնները կարելի է ուղարկել Շուշու Նպաստամատոյց յանձնաժողովին, սպանվածների և վիրաւորվածների ընտանիքների օգտին:

Աղէքսանդր Սուլէյմանեան

## ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Օգոստոսի 7-ին

Նախորդ նամակովս գրել էի, որ ամսիս 6-ին հայերը պէտք է մաղթանք կատարեին Շահի արևշատութեան համար: Երէկ առաւօտվանից ս. Լուսաւորիչ եկեղեցու դռները և եկեղեցուն մօտիկ բոլոր հայ տները զարդարված էին դրօշակներով: Պատարագից յետոյ եղաւ գոհաբանական մաղթանք, որտեղ ներկայ էին տեղիս պարսից հիւպատոսը տեղումս գտնված պարսկահպատակ թուրքերի հետ և տեղացի թուրքերից շատերը, մօտաւորապէս 150—200 հոգի: Մաղթանքից յետոյ տեղիս փոխանորդ Յուսիկ եպիսկոպոսը խօսեց մօտաւորապէս հետևեալը. «Դաւիթ մարգարէն ասում է չը կայ մի քաղցր բան քան եղբայրների սիրով ապրելը միասին: Թուրքերը և հայերը եղբայրներ են, որովհետև ապրում են մի հողի վրա. հողը, ջուրը բոլորինն է, ուստի դրանք միասին պէտք է համերաշխ ապրեն: Այսօր հայ և թուրք հաւաքվել են Աստծոյ տունը և աղօթում են միասին: Թէ եկեղեցում և թէ մզկիթում նախանձը և ատելութիւնը մարդիկ մի կողմն են թողնում և միասին աղօթում. այս աշխարհը նոյնպէս Աստծոյ տունն է: Եթէ մարդիկ խորը քննեն, եկեղեցուց և մզկիթից դուրս էլ նախանձից և ատելութիւնից պէտք է հեռու լինեն, որպէս զի մաքուր աշխարհը չէն պահեն և ոչ թէ եղբայրասպան դաւ մղել իրար դէմ»:

Հիւպատոսը ասաց հետևեալը. «Այսօր մենք հաւաքվել ենք այստեղ Մուզաֆֆեր-Էդդին Շահի վերջին մանիֆէստի առիթով: Եթէ դուք՝ հայեր և թուրքեր՝ նրա տրաձները սրտով շնորհաւորում էք՝ ուրեմն պէտք է աշխատէք, որ նրան չը վրդովէք ձեր մարդասպան վարմունքով: Որքան նա այս երկրի խաղաղութեան մասին լաւ լուրեր շատ լսի, այնքան շատ կուրախանայ և հանգիստ սրտով կը մտածի իր ժողովրդին աւելի և աւելի նորանոր շնորհներ տալու: Նրա սիրտը ցաւում է ոչ թէ միայն պարսկահպատակ թուրքերի, այլ և բոլոր թուրքերի ու հայերի իրար դէմ լարված եղբայրասպան կռուի և սպանութեան համար»:

Խաղաղարար կօմիսիայի անդամ պ. Ա. Տէր-Աւետիքեանցը ասաց հետևեալը. «Եղբայրներ, հայեր և թուրքեր, մարդիկ իրանց կեանքի ընթացքում համարեա թէ ամէնայն օր փորձեր են անում և այդ փորձերով հասնում են մի որոշ նպատակների: Եթէ մի փորձ չէ տալիս սպասելի պտուղ, մարդիկ յետ են դառնում այդ ընթացքից և մի ուրիշն են բռնում: Կովկասի հայերը և թուրքերը մի ահռելի դժոխային գործ են սկսել իրար դէմ և այդ գործում փորձը ոչ ոքի նպատակին չը հասցրեց և ոչ էլ բացեց դրանցից մէկն ու մէկի աչքը: Այս միլիոնաւոր ժողովրդի մէջ չը գտնվեցին գոնէ մի քանի խելօք մարդիկ, որոնք թէկուզ իրանց անձը զոհելու լինէին «չէյթանին» դարձեալ մի կերպ կարողանային իրանց ժողովրդի աչքերը բաց անել և յոյց տալ այն մեծ անդունդը, ուր տանում էր նրանց այս կորստաբեր ընթացքը: Բայց ես կասեմ. անցածը անցած համարենք, անցեալի վրա մի մեծ խաչ դնենք. չը յիշենք այն, ինչ եղել է մինչև այսօր և այսօրվանից ամէն ջանք գործ դնենք, ճիգ թափենք և աշխատենք, որ կարողանանք մեր քանդված և արեան մէջ լողացած հայրենիքը շէնացնել և բարենորոգել: Հայ և թուրք եղբայրներ, իմացած եղէք, ոչ Շահը և ոչ էլ նրա նման հարիւրաւոր Շահեր երկիր չեն կարող շինել, այլ երկիրը կը շէնացնի միմիայն համերաշխ աշխատանքով գնացող ժողովուրդը: Եթէ մենք պարապենք իրար կոտորելու գործով, ասացէք խնդրեմ, էլ ում համար է էգ ազատութեան մանիֆէստները և ում պէտք է լինի կօնստիտուցիան և դրա նման ուրիշ շնորհներ գործածողը: Իմ կարծիքով այն ժամանակ կստեղծվի մի այնպիսի ահռելի դրութիւն, որ մոռացնել կը տայ նոյն իսկ Ներոններին: Աղաչում եմ ձեզ, բաց արէք ձեր աչքերը, մի քանի րոպէ հանգիստ սրտով քննեցէք թէ ինչ բերեցին ձեր գլուխը այս երկու տարվայ ընթացքում, թէ ինչ արիւն իբրև ժառանգութիւն պիտի թողնէ մեզնից իւրաքանչիւրը իր որդուն և թէ ինչ անէծքներ պիտի տանենք մենք մեզ հետ այս աշխարհից: Մոռացէք անցեալը, մի վախեք, սրտով մօտեցէք իրար և աշխատէք վերականգնել այն ամենը, ինչ ձեր սեփական ձեռքով քանդեցիք»:

Խաղաղարար կօմիս. անդամ ուսանող Կասըմ-բէգօվը ասաց հետևեալը.

«Ես սրտով միանում եմ Տէր-Աւետիքեանցի ասածների հետ և աւելացնում եմ, որ ամեն մի անհատ պիտի իմանայ իբրև մարդ, որ նա այս աշխարհում ունի որոշ պարտք իր հարևանների և հասարակութեան համար կատարելու: Եթէ մէկը մեղանչում է մի անհատի դէմ, նա թշնամի է ամբողջ մարդկութեանը: Եթէ հարևանդ սոված է և մերկ, դու միշտ վտանգի կենթարկվես. իսկ եթէ նա կուշտ է և մերկ, դու ազատ ես: Ուրեմն աշխատենք բոլորս, որ մեր հարևանները մերկ և սոված չը լինեն և այս ընթացքով առաջ գնալը կը տանի մեզ միայն դէպի երջանկութիւն: Ինչ վերաբերում է հայութեան և թուրքութեան, դրա համար ես կասեմ, որ չը պէտք է լինենք հայ, թուրք, ռուս, հրեայ և այլն և այլն, պէտք է լինենք միմիայն—մարդիկ»: Սէյիդ Միր-աղա Միր-Բեագիմօվը ասաց հետևեալը. «Մենք այսօր մաղթանք ենք անում Շահի երկարակեցութեան համար. դա Պարսկաստանի հողի վրա թուրքերի թագաւորն է: Բայց իր հպատակ հայերին նա երբէք չի նայէ իբրև խորթի վրա: Նա նրանց միշտ որդի է համարել և այդպէս էլ վերաբերվել է դէպի այդ մի բուռը ժողովուրդը: Կովկասի ահռելի դէպքերը արձագանք չը գտան Պարսկաստանում. այնտեղի հայերը ազատ ու անվտանգ ապրում են մինչև այսօր. բայց եթէ Կովկասի հայ և թուրք ժողովուրդը իրան չը սանձահարէ և չը զգայ իր կորստաբեր գործի վնասը, նա կը մեղանչէ ամբողջ մարդկութեան դէմ, որովհետև այստեղի արձագանքը կանցնէ աշխարհի բոլոր քրիստոնեաների և մահմեդականների մէջ և կարող է անախորժ դրութիւն առաջ բերել: Ուրեմն հայ և մուսուլման եղբայրներ, լաւ իմացէք՝ որքան կորստաբեր են ձեր արածները և վերջ տուէք ձեր մինչև այսօր կատարած անմարդի գործերին»:

Մաղթանքից յետոյ փոխանորդը և պ. Ա. Տէր-Աւետիքեանը գնացին հիւպատոսի բնակարանը, որը սիրով ընդունելուց յետոյ կարդաց նրանց ձօն իր հեռագիրը, որ խփել էր Թիֆլիսի իրանց գեներալ-հիւպատոսին: Ուղարկված հեռագիրը ամսիս 4-ի տեղումս կատարված մանիֆեստացիայի մասին էր: Հիւպատոսը շատ մանրամասն նկարագրել էր հայերի հիւպատոսարան գնալը (երևի զարմացել է, որ հայերը ոխ չունենալով իրանց սրտում, հանգիստ սրտով, 200 հոգով, անցել են թուրքի թաղը և գիշեր ժամանակ մի քանի ժամեր անցկացրել 2000 թուրքերի մէջ) և աւելացրել է, որ ինքը հաւատում է, որ հայերը անկեղծ սրտով ցանկանում են հաշտութիւն և հայի ու թուրքի տրամադրութիւնը անհասարակ իրաւունք է տալիս հաստատապէս ասելու, որ այլևս մասսային յարձակումներ չը պէտք է տեղի ունենան: Այսօրվայ կատարված մաղթանքի համար հայերի կողմից հեռագիր ուղարկվեց Թէհրան արքայական Շահին և Թաւրիզ նորին կայսերական մեծութեան Թագաժառանգին:

Դ. Աղազարեան

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալէքսանդրօպօլ, օգոստոսի 8-ին

Խնդրում ենք մեծարգոյ խմբագրութեանդ «Մշակի» առաջիկայ համարներից մէկում տեղ տալ սոյն գրութեան:

«Մշակի» № 170-ի մէջ լոյս տեսած պ. Յովհ. Կոստանեանի «Կոչ ընկեր ուսուցիչներին» վերնագրով երկտողը միանգամայն յանկարծակիի բերեց մեզ ու զարմացրեց.— մինչ թէ մարդ այդ աստիճան անբարեխիղճ կը լինի: Պ. Յ. Կոստանեանը ներկայ 1906 թ. յունվարից հրաւիրված էր ս. Լուսաւորչի ծխական դպրոցի հոգաբարձութեան կողմից աւագ ուսուցչի պաշտօնով միայն վեց ամիս ժամանակամիջոցի համար, որպիսի ժամանակամիջոցը լրանալուց յետոյ նա ազատ էր համարվում պաշտօնից:

Բացի այդ, ինչպէս լսել ենք, տեղիս ընդհ. մանկավարժական մի քանի նիստերում պարզված էր արդէն, որ պ. Յ. Կոստանեանը աւագ ուսուցչի պաշտօնի համար անյարմար մէկն է, այնպէս որ, եթէ հոգաբարձութիւնը սխալվէր ու նորից նրան հրաւիրէր աւագ ուսուցչի պաշտօնով, մենք համոզված ենք, որ տեղիս ընդհ. մանկավարժական կազմը ինքն էր բողոքելու մեր վարմունքի դէմ:

Կարծում ենք, հոգաբարձութիւնս թէ իրաւաբանական և թէ բարոյական տեսակէտներից, ոչ միայն իրաւասու, այլ՝ պարտական պիտի զգար իրան պ. Յ. Կոստանեանին փոխարինելու մէկ ուրիշ աւելի պատրաստական և ձեռնհաս անձով. այդպէս էլ վարվեց հոգաբարձութիւնս նրա հետ:

Բայց պ. Յ. Կոստանեանը երբ գլխովին համոզվեց, որ ինքն այլ ևս տեղ չի գտնելու Լուսաւորչի դպրոցում, անբարեխղճութիւն ունեցաւ կեղծիքի դիմելու: Ահ... թէ ինչու այն ժամանակ, երբ դպրոցիս ուսուցչական նախկին կազմը (բացի պ. պ. Յ. Կոստանեանից և Ն. Սուլթանեանից) խնդրագրերով դիմած էր հոգաբարձութեանս Լուսաւորչի դպրոցում վերստին ուսուցչական պաշտօն գտնելու համար, հետևապէս և համակարծիք էին հոգաբարձութեանս որոշմանը, պ. Յ. Կոստանեանը առանց ամաչելու «ընկեր ուսուցիչներին» կոչ է ուղղում բօյկօտի ենթարկելու համար դպրոցը, և այն, իրան հետ միանգամայն ոչ համակարծիք «մանկավարժական կազմի» անունից, և այն ժամանակ, երբ արդէն նոր հրաւիրված աւագ ուսուցչի և նախկին ուսուցիչներից ոմանց հետ հոգաբարձութիւնս վերջնականապէս պայմանաւորված էր:

Հաւատած եղէք, որ ընթերցող հասարակութեանը նեղութիւն չէինք տայ սոյնանման յօդուածներ տպագրութեան տալով, քանի որ պ. Յ. Կոստանեանը քաջ ծանօթ է Ալէքսանդրօպօլի բոլոր «ընկեր ուսուցիչներին» և նրա «եղծեալ» կոչերը ոչ մի ազդեցութիւն չէին ունենայ մեր շրջանում, բայց մեր միջավայրից հեռու ապրող ուսուցիչներին թիւրիմացութեան զոհ չը դարձնելու համար միայն յանձն առանք ներկայ պատասխանով պատուել պ. Յ. Կոստանեանին:

Ս. Լուսաւորչի դպրոցի Հոգաբարձութիւն

—

Ախալքալաք, 6 օգոստոսի

Պ. Տիգրան Յովհաննիսեանը իր մասնագիտական հմտութեամբ փոխանակ մի «տգէտ» գաւառացու մի բան հասկացնելու, սկսել է հայհոյանքներ ու սպառնալիքներ կարդալ «Ալիքի» № 79-ում:

Միշտ էլ գաւառացիները տգէտ են եղել «մայրաքաղաքի իմաստուններին» առաջ, որ նրանց այդքան երես են առել ու քաղաքավարական կանոններից դուրս եկել:

Պ. պ. «մայրաքաղաքի իմաստուններ», լաւ իմացէք, որ ձեր «իմաստութեան» հետևանքն է գաւառների այժմեան տարտամ և անմխիթար վիճակը:

Զուրկ լինելով մասնագիտական «անբարեխիղճ» մանեօվրներից, կրկին յիշեցնում եմ պ. Տ. Յովհաննիսեանին, որ ես իմ յօդուածով հարց էի տուել թէ՝ ինչ է կատարվել «պառլամենտական» կոչված ընտրութեան վարագոյրի ետև:

Բայց նա խուսափից այդ ասելուց:

Էն-Էն

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 3-ի առաւօտեան ժամը 4-ին, Կրօնշտադում, քաղաքից դուրս, № 4 բատարէյայում, Կոնստանդին Նաւահանգստի մօտ, հրացանազարկ արվեցին ժամանակաւոր զինւորական դատարանից մահվան դատապարտված հետևակ զօրքի 7 զինուորներ և 3 քաղաքացիք: Զինուորները խոստովանեցին քահանային և հաղորդվեցին. քաղաքացիները հրաժարվեցին: Հրացանազարկ արին ծովանօթաձիգները: Դէպքի տեղը ներկայ էին Կրօնշտադում գտնվող իւրաքանչիւր զորամասերից մի-մի վաշտ: Ճնշող և ծանր տպաւորութիւն գործեց պատժվողներից մէկի—էլէկտրոտեխնիկական ինստիտուտի ուսանող Տէր-Մկրտչեանի հայրը. իր որդու վիճակի մասին նա տեղեկացել էր լրագիրների հեռագիրներից և եկել էր Շուշից, ուր ծառայում է իբրև ակցիզնի չինովնիկ: Եղել է Պետերբուրգում, հանդիպել է Կրօնշտադի բոլոր կառավարիչ անձերի, բայց բոլորը իզուր և անօգուտ: Նրա միւս որդին էլ բանտարկված է նրա համար, որ փողոցում մեծ եղբօրը տեսնելով աղաղակել է՝ «Հայրիկը եկել է»: Ծերունու վիշտը աննկարագրելի է: Երեկոյեան բանտարկված որդուն բանտից ազատելով՝ Կրօնշտադից աքսորեցին: Անկարգութիւնների մեղսակից նաւաստիների դատավճիռը կը լինի այս շաբաթ: Նաւաստորմային օֆիցերների սպանութեան մէջ համարեա բոլորն էլ յայտնվեցին: Նաւաստիների հետ պէտք է դատվեն շատ քաղաքացիներ ևս, ի թիւս որոնց և նախկին պատգամաւոր Օնիպկօն և ոմն Վօլօշէվիչ, որը ռազմիկ խմբի ղեկավարներից մէկն է համարվում: Վօլօշէվիչը ձերբակալվել է Նաւահանգստում. Նրա պայուսակի մէջ գտնվել է յեղափոխական բնոյթ կրող Կրօնշտադի յատակագիծը: («Петерб. Листокъ»)

—

Ինչպէս լսում ենք, Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը առաջիկայ ուսումնական տարվայ համար հին ուսուցչական կազմի մէջ մտցրել է հետևեալ փոփոխութիւնը. հեռացված են կազմից ուսուցիչներ՝ Մելիք-Ալլահվերդեան, Թումկեան, Սպարապետեան և Զարդեղեան քահանայ. հրաւիրված են նոր ուսուցիչներ՝ Ա. Բաբալխանեան, Մ. Յովհաննիսեան, Լ. Բաբայեան, Դիլանեան, բժ. Մաբալխանեան, Տէր-Միրաքեան և Մուշեղեան:

—

Թիֆլիսից ուղարկված է Էջմիածնի Կենտրոնական Ժողովին հետևեալ հեռագիրը. «Էջմիածին, Կենտրոնական Ժողովի Նախագահին: Բողոքելով Թիֆլիսի քահանաների ոտնձգութեան դէմ Կենտրոնական Ժողովի գումարման առիթով, մենք ողջունում ենք ռուսահայոց անդրանիկ Կենտրոնական Ժողովը, համարելով դրան մեր կեանքի պահանջների հարազատ արտայայտութիւն, և բարեմաղթում ենք արդիւնաւոր գործունէութիւն: Յովհաննէս աւ. քահ. Մարտիրոսեանց, Յովսէփ քահ. Տէր-Պետրոսեանց, Սարգիս սարկաւագ Խուցեան»:

—

Թաւրիզի Լիլաւա թաղի երկսեռ դպրոցի տեսուչ պ. Նիկողայոս Սարգսեանը, ներկայումս գտնվելով Թիֆլիսում, իր տեսչութեանը յանձնված դպրոցի համար հրաւիրում է ուսուցիչներ, ի հարկէ, շատ թէ քիչ յարմարագոյններին և բաւարար ռոճիկով: Ն. Սարգսեանի կողմից դիմումներ են եղել մի քանի ուսուցիչների: Սակայն ինչ ասել կուզէ, որ համագումարներում, ժողովներում և միտինգներում ժողովրդի լուսաւորութեան ու շահերի մասին ճառագիտավոր և մեծ ապլօմբով ճառող մեր երիտասարդ, այսպէս անուանված՝ «գաղափարական» հայ ուսուցիչներից և ոչ մէկը չէ բարեհաճում գնալ Թաւրիզ ուսուցչութեան պաշտօնով... Ինչու: Շատ պարզ և հասկանալի է. Որովհետև մեր «գաղափարական» յորջորջվող երիտասարդ ուսուցիչների մեծամասնութիւնը գաղափարական է միայն համագումարներում, ժողովներում և միտինգներում... Դուրս կը գան այդ ուսուցիչները ժողովատեղից թէ չէ՝ ժողովրդական շահեր, լուսաւորութիւն, գաղափարականութիւն կը ծալեն, մի կողմ կը նետեն ու կը սկսեն որոնել չաղ ռոճիկներ, զուտ եսական շահեր, յարմարութիւններ և այլն: Ցաւալի է:

—

Գեն.-լէյտ. Շիրինկինը Թիֆլիսից մեկնելու է օգոստոսի վերջերին: («Г. К.»)

—

Գորից գրում են «Т. Л.» լրագրին, որ այնտեղ մի քանի օր առաջ, կէսօրի մօտ անյայտ չարագործները փորձել են սպանել գաւառապետ Լէօնտիևին: Վերջինս, նշանակվելով Բօրչալուի գաւառապետ, ինչպէս ասում են, հրաժեշտային այցելութիւն էր անում: Սօրօնի փողոցով անցնելիս, նրա վրա ռումբ են նետել, որի պայթումից ջարդվել է կառքի արկղը և վիրաւորվել է մի ձի: Սրանից յետոյ չարագործները շարունակել են ատրճանակ պարպել, որով վիրաւորել են կառապանին ու սաւարի վրա նստած պահակին: Լէօնտիևը մնացել է անվնաս: Նրա կեանքի դէմ մահափորձողները կարողացել են փախչել:

—

Լսում ենք, որ պ. Ա. Արասխանեանը ձեռնարկել է թարգմանելու Կարլ Մարքսի հռչակաւոր «Կապիտալ»-ը, որ նա մտադիր է լոյս ընծայել պրակներով: Պ. Արասխանեան մտադիր է այդ հսկայական աշխատութեան առաջին պրակը լոյս ընծայել եկող յունվարին:

—

Ստացանք հետևեալ նոր գրքոյկները. 1) Արտ. Ղարիբեանի «Մամուռ», բանաստեղծական փնջիկ, 148 երես, գինն է 40 կոպէկ. 2) Անուշաւան Աբովեանի «Պատկերներ» (գիւղական կեանքից), 127 երես, գինն է 30 կոպէկ:

—

Մեզ հաղորդում են, որ երկուշաբթի, ամսիս 14-ին, Թիֆլիսում Ս.-Սարգսի փողոցի վրա գտնվող Մանուէլեանցի տանը գիշերվայ ժամը 11-ին մի անյայտ գող մտնելով ուղղակի դիմեց այդ բակում բնակվող վրացի հացթուխ Եկօֆի բնակարանը և ատրճանակով սպառնալով պահանջեց, որ դուռը բաց անեն: Երբ վարձակալը դուռը բաց արեց, յանդուգն գողը ատրճանակն ուղղելով տանտիրոջ վրա՝ պահանջեց, որ վերջինս անմիջապէս 50 ր. փող յանձնէ իրան: Չը նայելով հացթուխի ու սրա կնոջ խնդրանքներին, աւազակը յամառօրէն պահանջում էր իւր: Եւ վերջապէս ստանալով 50 ր., թողեց բակն ու հանգիստ հեռացաւ:

—

Բարձր բիւրոկրատիական շրջանում, լսում ենք, ներկայումս զբաղված են Լեհաստանի թագաւորութեան մէջ, Կովկասում և Շուրջ-Բալթեան երկրում տեղական դիկտատորներ հաստատելու նախագծի քննութեամբ: Դիկտատորներին լայն և անսահմանափակ լիազօրութիւններ են տրվելու կռիւ մղելու՝ յեղափոխական բռնկումների դէմ: Այս միջոցների թւում մտածվում է այն, որ դիկտատորներին իրաւունք է տրվում հրացանազարկել մահափորձի տեղ դարձող թաղամասերը, խոշոր տուգանքներ վերցնել յիշեալ թաղամասերի բնակիչներից եթէ մահափորձող անձինք չը բռնվեն, ազգաբնակութիւնից հեռացնել պատանդ վերցնողներին, գործադրելով այդպիսի անձանց նկատմամբ ծանր պատիժներ, նոյնիսկ մահվան պատիժ եղակի դէպքում, գրաւել տեռօր խմբական ակտ կատարող անձանց բարեկամների բաւականները և այլն:

—

Լուրերի համաձայն Օդեսսայի շրջանի զօրքերի գլխաւոր հրամանատար Կաուլբարսը, գեներալ-նահանգապետ Կարանգօզովը և քաղաքապետ Գրիգորիևը հրաժարական են ներկայացրել՝ հիւանդութիւնը պատճառաբանելով: Մինիստր-պրեմիէրը Կարանգօզովին հեռագրով իր ցաւակցութիւնն է յայտնել: («Р. В.»)

—

Պալատական կօմենդանտ Տրեպօվը հիւանդացել է: Կրասնօյէ Սելօյում վերջին օրերս մանեօվրներին նա բացակայ է եղել:

—

Գեներալ Բօգդանովիչի «հայրենասիրական» գործունէութիւնը կրկին վերանորոգվում է: Այս անգամ բրօշիւրներ և կոչեր հրատարակելու համար գումար են տալիս, ինչպէս լուր է տարածվել, Մոսկվայի միապետականները: («Р. Б.»)

—

Ոստիկանական վարչութեան տուած տեղեկութիւններից երևում է, որ վերջին շաբաթվայ ընթացքում տեղի են ունեցել ադմինիստրացիայի ներկայացուցիչների 72 սպանութեան դէպքեր, 42 հոգի ծանր կերպով վիրաւորված և գտնված են մօտ 120 ռումբեր: Երևան են հանված 12 հատ գաղտնի տպարաններ և արգելված հրատարակութիւնների 17 պահեստատեղիներ: Կողոպտված են 13 հատ արքունական գինետներ և 18 գանձարաններ, որոնք պատկանում են կառավարութեանը, որի ժամանակ սպանվածների և վիրաւորվածների թիւը հասնում է 22 հոգու: Կողմնակի մարդկանցից կողոպտված են 64 հոգի: Բանտարկված են 276 հոգի քաղաքական յանցաւորներ: Երաշխաւորութեամբ և գրաւականով բանտից ազատ են թողնված 146 հոգի, որոնք բանտարկված են եղել ժանդարմական ոստիկանութեան կարգադրութեան համաձայն («Стр.»)

—

Բարձր ուսումնարաններում, ինչպէս լսել է «XX В.» լրագիրը, ուսումնարանների կառավարիչները ուսման սկզբին մտադիր են միջնորդել անմիջապէս իրականացնել «լիբերալ» բարենորոգութիւնները, առանց որոնց ուսումնական խորհրդի կարծիքով, անհնարին է պարապմունքները կարգին շարունակել: Մինիստրներից մի քանիսը, լուրերին նայելով, ուսումնարանների շէնութեան մէջ ժողովներ գումարելու դէմ ոչինչ չունեն, միայն թէ հիմա ևս այդ ժողովներին չը մասնակցեն կողմնակի մարդիկ:

—

Հաւաստի աղբիւրներից ստացված լուրերի համաձայն Վարշավայի գեներալ-նահանգապետ Սկալօնը ստանում է երկարատև արձակուրդ արտասահման գնալու համար. Նրա տեղ նշանակվելու է կոմս Իգնատիևը՝ առանձին լիազօրութիւններով: («Товарищъ»)

—

Սամարայի նորերս սպանված նահանգապետի այրուն նիւթական միանուագ օգնութիւն է տրվել 3000 րուբլի, իսկ կենսաթոշակ նշանակվել է տարեկան 8,000 րուբլի: Ի հարկէ ի հաշիւ ժողովրդական գրպանի: («Р. В.»)

—

Կապիտան Վօզակը և պօրուչիկ Լեբեդևը, իբրև մենամարտավկաներ պօրուչիկ Սմիրնսկու կողմից, «Нов. Вр.»-ի մէջ նամակ հրատարակելով մենամարտի են հրաւիրում Պետական Դումայի անդամ Եակօբսօնին այն վիրաւորական ճառերի համար, որ նա արտասանել է Պետական Դումայում զօրքի վերաբերմամբ: («Страна»)

—

«Бирж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ մտադրութիւն կայ Արևելեան Սիբիրում առանձին փոխարքայութիւն հաստատել: Այդ տեղեկութիւնների համաձայն վերջինիս իրաւասութեան են ենթարկվելու Եակուտի, Ամուրի, Պրիմօրսկի երկիրները, նաև Իրկուտսկի և Ենիսէյսկի նահանգները: Մտադրութիւն կայ նոր փոխարքայութեան սահմանների մէջ մտցնել Մանջուրիայի մի մասը, միաժամանակ պահպանելով բոլոր նահանգապետութիւնները: Հաւանական է թւում, որ Հեռաւոր-Արևելքի փոխարքայութեան պաշտօնը յանձնվի գեներալ Գրօդեկօվին, որի բնակավայր-կենտրոնը լինելու է Իրկուտսկը:

—

Ներկայումս Պետերբուրգում գտնվող գեներալ Ռենենկամպֆին մօտիկ ապագայում կառաջարկվի գնալ Հեռաւոր-Արևելք, յանձնարարութեամբ՝ ճանապարհին Անդր-Բայկալեան երկրում կարգը վերականգնելու համար: («Р. В.»)

—

Լազարեան ճեմարանում օգոստոսի 12-ից սկսվում են ընդունելութեան քննութիւնները: Պարապմունքները սկսվելու են օգոստոսի 16-ից: Փաստօրէն համալսարանական դասընթացի բարձր դասարաններում պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 1-ից ոչ վաղ:

—

«Понедѣльникъ» լրագրի մէջ տպագրված է Պետերբուրգի համալսարանի տեսուչ պրոֆ. Բօրգմանի հետ կատարված մի խօսակցութիւն. պարապմունքները սկսելու առիթով տրված հարցին նա պատասխանել է, որ դա մի շատ դժուար հարց է, բայց և այնպէս կարելի է կարծել, որ ուսումնարանական պարապմունքները կը սկսվեն և, գուցէ, շարունակվեն ոչ այնքան աղմկալի կերպով: Այն հարցին, թէ շա՞տ է արդեօք համալսարան մտող ուսանողների թիւը, պրոֆեսսոր Բօրգմանը ասաց, որ ինքը չէ կարող ճիշտ պատասխան տալ այդ հարցին, որովհետև այսօր է ստանձնել իր պաշտօնը և դեռևս չէ կարողացել ծանօթանալ գործերի դրութեան հետ: «Յամենայն դէպս ես կարող եմ ասել ձեզ,—նկատեց նա,—որ մօտաւորապէս ստացվել են $2^{1}/_{2}$ հազար խնդիրներ: Իսկ ինչ վերաբերում է ազատ ունկնդիրներին, թէև խնդիրները շատ են տրվել, բայց և այնպէս այդպիսիների թիւը շատ չէ կարող լինել: Համալսարանի խորհուրդը դեռևս չէ սահմանել ուսանողների որոշ քանակը, այլ սահմանափակել է միայն խնդիրների ընդունելութեան ժամանակամիջոցը մինչև օգոստոսի 25-ը, և նորից հարկ կը լինի այդպիսով ընդունել $2^{1}/_{2}$ հազար հոգուց ոչ պակաս: Բացի դրանից դիւանատան 1906 թւի մայիսի 12-ի քաղուածքների համաձայն Պետերբուրգի համալսարանը ունի ընդամենը 5447 ուսանող: Հետևապէս, ուսումնական տարվայ սկզբում համալսարանը իսկապէս կունենայ մօտաւորապէս 8000 ուսանող»:

—

**ՍՈՒԽՈՒՄԻՑ** մեզ գրում են. «Բաթումի պատգամաւորի ընտրութեան արձանագրութիւնը, Բաթում քաղաքի մէջ կաֆէներում ստորագրվելուց յետոյ, պօստային ու շոգենաւային ճամբորդութիւններ էր կատարել պատուիրակների հետևից ընկնելու և ստորագրվելու համար: Յուսանք և սպասենք, որ «անկաշառ» և «անկողմնապահ» «Ալիքը», որ իր № 83-ով պահանջ էր յարուցել Դիլիջանի ընտրութեան անկանոն լինելու և նոր ընտրութիւններ կատարելու մասին, որ «ստորագրված է զանազան տեղերում», ինքնաբերաբար կերպով պահանջ կը յարուցանի և Բաթումի ընտրութիւնը ջնջելու և նոր ընտրութիւն կատարելու»:

—

**ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ** պ. Սէյլանը մեզ գրում է. «Համաձայն լրագիրներում տուած յայտարարութեան, Բագուից պ. Մարգար Աւետիսեան, ըստ իմ խնդրանաց, ուղարկել է Ախալքալաքի գաւառի Օրօձալար գիւղի ուսումնարանի գրադարանին 100 օրինակ, ժողովրդական ընթերցանութեան համար, զանազան գրքեր: Ինչպէս նոյն գրադարանի հիմնադիրներից մէկն՝ ի դիմաց Օրօձալարի ընթերցասէրների շնորհակալութիւն պ. Մ. Աւետիսեանին, որի ուղարկած գրքերից օգտվելու է հասարակութիւնը, որ և յանձնված են նոյն գիւղացի պ. Թադէոս Մարգարեանին՝ ինչպէս գրադարանապետի՝ պահպանելու, մինչև ուսումնարանի և գրադարանի շինութեան աւարտը»:

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ուրմի, օգոստոսի 1-ին

Շատերը դեռևս այն կարծիքին են, թէ այժմեան հանգամանքներում հայկական կեանքի անդորրավայրը Պարսկաստանն է այժմ. Նայենք իրականութեանը:

Ամիսներ առաջ Նախջուան-Թէփա գիւղի հետ պատահած սարսափը և վիշտ պատճառող հայերի սպանումը, եկեղեցու սպասների, գիւղի քահանայի և ուրիշների տների կողոպտվելը մոռացված չէին տակաւին, և ահա թէ հիմա ևս ականատես ենք նորանոր սոսկումներ, թէև դրանք արձագանք չեն յիշում դէպքի նման կովկասեան հայ-թուրքական անցքերի: Այս անգամ քրդերն են հրապարակի վրա՝ իրանց սիրած պատմա-ժառանգական կատարելագործված արհեստով աւազակութեամբ:

Ապշեցնող են սրանց աւազակութեան յանդուգն գործողութիւնները. ճանապարհներում, դաշտերում, գիւղերում, գիշեր եղաւ թէ ցերեկ, քրիստոնեայ լինի թէ մահմեդական, անխնայ կողոպտում են, մինչև անգամ գիւղերում հարկեր են նշանակում, գերի վերցնում, փրկանք պահանջում, իսկ ամեն մի դիմադրութիւն պատժվում է հրաշէկ գնդակով:

Անցեալ յուլիս ամիսը նման դէպքերով հարուստ է, որոնցից մենք անտես չենք անում միայն մի քանիսը արձանագրել:

Յուլիսի 12-ին յարձակվում են հայաբնակ Բաղըրօ գիւղի վրա 40 հոգի լաւ զինված քրդեր. խղճուկ և զէնքի անվարժ գիւղը ոտքի է հանում ընդամենը 8 հոգի պաշտպաններ, որոնք կարճ դիմադրութիւնից յետոյ, գիշատիչների շրջապատի և միահամուռ զարկերից ընկճված, երկու սպանված և նոյնքան վիրաւոր տալով նահանջում են գիւղի յետին մասը: Գիւղատէր Հաջի Աղիզ Խան-Միրփանցի 10-նաւոր զինված պահնորդ թուրքերը իբր թէ օգնութեան են հասնում, բայց առանց կռուելու հեռանում են իբրև վախկոտ նապաստակներ, և գիւղի որոշ մասը ենթարկվում է թալանի:

Հետևեալ օրը յարձակվում են Զարգաղ և Սանգար գիւղերի կալատեղերի վրա, քաղաքից կէս վերստ հեռաւորութեամբ, սպանում են մի ասորի կառապանի և մահացու վիրաւորում նրա ընկեր թուրքին, ջուալ-փալասը ցորենի հետ տանելով:

18-ին յարձակվում են Ղզլաշուղ հայ-ասորաբնակ գիւղի վրա և թալանում 10-նեակ տներ:

20-ին կառավարութեան Զարգօվլի կոչված ձիաւոր զօրքերը Մաչկօռ գիւղի մօտ կռուի են բռնվում քրդերի հետ, որոնք գերակշիռ թիւ են կազմում օգնութեան եկող բազմաթիւ հրոսակներով. մինչև զինուորների փամփուշտները սպառվելով փախուստի են դիմում թողնելով 3 սպանված և երկու վիրաւոր: Զինուորների գլխաւոր սուլթանը ապաւինում է գիւղի ազդեցիկ մի սէյիդի տանը. վերջինս, վստահ իրան դիմողին փրկելու, դուռը փակում, Ղուրանը ձեռքին ընդառաջում է հետապնդող քրդերին՝ խնայել ի սէր մեծ Մարգարէի և նրա սրբանուէր Ղուրանին: Քրդերի յարգանքը այն է լինում, որ դուռը չեն կոտրում, այլ պատը քանդում և այնտեղով մտնում սպանում են ապաստանեալին:

Իրանց անվեհերութեամբ յաճախ քրդերի յանդգնութիւնը պատժող քաջ մաւանեցիք (լեռնական ասորոց մի գիւղ) ևս դիմելով կառավարութեան օգնութիւն են խնդրում. «Գնացէք պաշտպանվեցէք, շուտով Թաւրիզից զօրք կը հասնի»—հրամայված է իրանց:

Թօփուզաւայի գիւղապետ ասորի Գիւարգիզի մի ազգականին գերի են վերցնում և, 1000 թումանի փրկանք ստանալուց յետոյ, բաց թողնում:

Մի ուրիշ թուրքի հետ նոյնպէս են վարվում: Խօյի և Սալմաստի ճանապարհին պօստը իր հետևորդներով անհետացնում են: Նոյն ճանապարհին 15 թուրքերի գլխատում են, որոնց մէկը սէյիդ է լինում:

Պատմում են, որ աւազակապետը—անցեալ տարի Թաւրիզում սպանված հռչակաւոր Ջաֆար աղայի եղբայր Ղասօն,—մի թուղթ գրել, սպանված սէյիդի գրպանն է դրել այս իմաստով. «ոչ ոքի չը մեղադրել. սրան սպանողը Ջաֆար աղայի եղբայրն է. քանի որ Ղասօն թնդանօթի բերան չէ ընկել, վրիժառու կը լինի եղբօր արեան»:

Կառավարութեան տեղական միջոցները անբաւարար են կատարվող ամենօրեայ վայրագութիւնները զսպելու. կարգադրված է Թաւրիզից 3 վաշտ զօրք ղրկել թնդանօթներով պատժելու ոչ մի իշխանութիւն չը ճանաչող այս ազգին:

Ա. Տ.-Ե.

## ՆԱՄԱԿ ԴԱՆԻԱՅԻՑ

Կօպէնհագէն, սեպտ. 12-ին (ն. տ.)

Կէսօրին համագումարը հրաւիրվեց քաղաքի Raadhus-ը, ուր պ. Hage բարևեց անդամներին և վերջացրեց փափագով, որ այստեղի քաղաքապետի պաշտօնը մի օր մի կին ստանձնէ: Miss Catt-ը ընդունեց կատակը և պատասխանեց, որ կանայք այնքան վտանգաւոր չեն, որ նրանք դուրս անեն բարի քաղաքագլխին իր գեղեցիկ Raadhus-ից (խորհրդարանից): Այս խօսքերը լսելով մաղթեց նա աջողութիւն և առաջադիմութիւն:

Raadhus-ը այցելելուց յետոյ պատգամաւորուհիները վերադարձան համագումարի գեղեցիկ շէնքը և նորից շարունակեցին ճառախօսութիւնները: Տիկին Donohoes, Աւստրալիայի ներկայացուցիչը, կարողացաւ քաջաբար ատենախօսել, թէ իր երկիրը արդէն 1894-ից սկսած է մտցրել կանանց քուէարկութեան իրաւունքը, և հիմա աւստրալիացիները այնչափ իրաւունք են տալիս կանանց, ինչքան որ տալիս են տղամարդկանց—գրեթէ ամբողջ երկիրը: Շատ օրէնքներ որոշված են կանանց քուէարկութեան օգտին: Աւստրալիացի կինը կարող է ստանալ ամեն մի դիրք որ նա կուզէ. Նա կարող է նոյն իսկ առաջին մինիստրի պաշտօնը վարել: Չէ թէ միայն քոյրերի ազատութեան համար աւստրալիացիները աշխատեցին, բայց նրանք ընդունեցին կանանց պառլամենտի մէջ իբրև անդամներ: Այդ տիկնոջ ճառը մեծ ծափահարութեան պատճառ եղաւ: Ծանօթ գերմանական պատգամաւորուհի Pil. Dokt. Käthe Schirmacher ուսումնասիրեց այդ հարցը զինուորական պարտականութեան հետ միասին, ասելով թէ մայրական պարտաւորութիւնը ամենից մեծ անկիւնն է, որ կինը իր երկրի համար կարող է անել:

Կանանց իրաւունքի առաջին համագումարը տեղի ունեցաւ Վաշինգտօնում 1902-ին և երկրորդը 1904-ին Բերլինում: Այդ ժամանակ երբէք դրանցից մէկը չէր կարող երևակայել, որ այդ կարճ միջոցին հարցը այդպէս շուտ պիտի զարգանայ: Դրա նպատակն է, ինչպէս որ արդէն անունը ցոյց է տալիս, ժողովել բարեկամներին ամեն երկրներից կանանց ազատութեան համար, նոյնպէս և հաւասարօրէն ճիգ ու ջանք գործադրել մի կազմակերպված իրական հասարակական գործ ձեռք բերելու։ Ըստ յօդուածագրին որոշել են ամեն հինգ տարին մէկ անգամ ժողովվել, բայց, եթէ պարագաները ստիպեն, կարող են այդ ժամանակից առաջ էլ ժողովվել։ Այժմեան համագումարը այդպիսի արտակարգն է։ Զորեքշաբթի օրը շարունակեցին տեղեկագիրները միացած երկրների ներկայացուցիչները։

Եւրոպայի երկրներից ոչ մէկն այնտեղ չէր ներկայացած, որ տեղս եղած լինէր այս հարցը լուծելու։ Շվէտը ունի 63 ընկերութիւններ, որոնք ոգևորութեամբ աշխատում են այդ նպատակին համար։ Միայն 3 ամսվայ միջոցին 60,522 անձինք ստորագրեցին խմբովին խնդրագիրը, և հիմա դեռ շարունակվում են ստորագրութիւնները։

Բնական է, որ այդ շարժումը պէտք էր իրանց ազատութեան մասին հոգացող միջին դասի կանանց կողմից սկսվէր, բայց նա տարածվել է նոյնիսկ ստորին խաւերի մէջ էլ, ինչպէս այդ երևում է խնդրագրի ստորագրութիւններից. տանտիկնոջ անուան մօտ կայ նաև սպասուհու անունը. կոմսուհի, դերձակուհի և դերասանուհի ստորագրութիւնները իրար հետ խառնխուռն գրված են։ Miss Catt-ը սրտագին յայտնեց իր գոհութիւնը ամեն մի շրջանին մասնաւորապէս և ասաց իր փափագը, որ շարունակեն նոյն ոգով աշխատելու։ Այս օրվան կէսօրը նշանակված էր ի յիշատակ հանգուցեալ Susan B. Anthony-ին որը առանց յոգնելու աշխատում էր ազատութեան և մարդկային իրաւունքի համար։

Նա ինչպէս իր երիտասարդութեան ժամանակին ժիր և աներկիւղ պատերազմում էր ստրկութեան վերացման համար ոչ թէ այն պատճառով, որ նեգրը սև է, այլ որովհետև նա մարդ է,—նոյնպէս և իր վերջին 10 տարիները նուիրեց կանանց քաղաքական քուէարկութեան հարցին, ոչ թէ նրա համար, որ նա կին է, այլ նրա համար, որ նա մարդ է։

Լ. Ամիրխանեան

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

14 օգոստոսի

ԲԵՐԼԻՆ, 13 օգոստոսի։ «Товарищъ» լրագրում—Բերլինից փախած Պետերբուրգի Հեռ. Գործ. հեռագրի առիթով ասված էր, որ Բերլինում հրատարակվող «Русскій Проводъ» լրագիրը հասարակ տեղեկատու մի թերթ է։ Ուստի «Товарищъ» լրագիրը հարցնում է—ինչու գործակալութեան Բերլինի թղթակիցը մոլորեցնում է հասարակութեանը, պնդելով թէ՝ «Р. П.»-ի խմբագիր Գերշմանը Բերլինից աքսորվել է իր լրագրի յեղափոխական ուղղութեան պատճառով։ Այժմ գործակալութեան թղթակիցը նոր հեռագրով հաղորդում է, որ «Р. П.»-ը սկզբում, յիրաւի, տեղեկատու թերթ էր, իսկ յետոյ արդէն դարձել է յեղափոխական։ Այսպէս օրինակ, օգոստոսի 12-ի համարում բոլոր երկրների բանւորներին ուղղած մի կոչ է տպված, որով հրաւիրում է յարել միջազգային սօցիալիզմին։ «Пров.» նոյն համարում կրկին Գերշմանը ասում է, որ իր լրագիրը կռիւ է մղում Ռուսաստանի ազատութեան համար։ Բացի վերոյիշեալներից, օգոստոսի 11-ի համարում մի մանիֆեստ էր տպված՝ ուղղված գիւղացիութեան։ Երբ Գործակալութեան թղթակիցը հարցնում է թէ ինչու է Գերշմանը աքսորվել, նրան պատասխանել են թէ՝ Գերմանիան բաւականաչափ սեփական ագիտատորներ ունի արդէն, այնպէս որ նա անտարբեր մնալ օտարների վերաբերմամբ չէ կարող երբէք։

ՏՕԿԻՕ, 13 օգոստոսի։ Մօշեկօւի ռուս-եապօնական ընկերութեան անդամներից մէկի հետ խօսակցութեան ժամանակ ռուս դեսպան Բախմետիւ ասել է, որ Ռուսաստանը լիովին ցանկանում է ամենալաւ յարաբերութիւններ պահպանել Եապօնիայի հետ և առևտուրը ծաղկեցնել Սիբիրում և Մանջուրիայում։ Բանակցութիւններ են վարվում ձկնորսութեան համար։ Մաքսային հարցը լուծվելու է փոխադարձ զիջողութիւններով։ Եապօնական մամուլը ողջունում է Բախմէտևի այս յայտարարութիւնը։ «Ժիժիշիմպօ» լրագիրը գրում է, որ շնորհիւ Իզվօլսկու և Բախմետևի ռուս-եապօնական յարաբերութիւնները օր-աւուր աւելի և աւելի բարեկամական են դառնում։

Նոյնիսկ ռուսատեաց մամուլը Բախմէտևի յայտարարութիւնը՝ Ռուսաստանի և Եապօնիայի մերձեցման նշան է համարում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 օգոստոսի։ Ի նկատ առնելով Ռուսաց Հեռ. Գործ. տուած այն լուրը, որ իբր Կիևօ-Պեչերսկի վանքում մի կոչ է տպված, որով հրաւիրվում է կոտորել հրէաներին և լեհերին, վանքի հոգևոր դասը խնդրում է մեզ յայտնել, որ նա առաջարկում է Ռուսաց Հեռ. Գործ. հերքել այդ լուրը, և մատնանշել ստախօսին, հակառակ դէպքում Ռուս. Հեռ. Գործ. դատաստանական պատասխանատուութեան կենթարկվի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 օգոստոսի։ Թագաւոր Կայսրը բարեհաճել է մինիստրների Նախագահ Ստօլիպինին ուղարկել հետևեալ հեռագիրը. «Խօսք չեմ գտնում արտայայտելու իմ ատելութիւնը. փառք Աստուծոյ, որ դուք անվնաս էք մնացել։ Ամբողջ սրտով հաւատում եմ, որ ձեր որդին և աղջիկը շուտով կառողջանան, ինչպէս և կապաքինվեն մնացած վիրաւորվածները։ ՆԻԿՈԼԱՅ»

Մինիստրների նախագահը բազմաթիւ հեռագիրներ է ստանում. ի միջի այլոց հեռագրել են համակրանքի արտայայտութիւններով Մեծ Իշխանները և Իշխանուհիները և կոմս Վիտտէն։ Բժշկական խորհրդակցութիւնը գտել է, որ Ստօլիպինի դստեր դրութիւնը լուրջ է, թէև անյապաղ անդամահատութեան անհրաժեշտութիւն չը կայ։

ՍՕՖԻԱ, 13 օգ.։ Կ. Պոլսի բուլղարական դիպլօմատիական գործակալի հրաժարականը նրա և գեներալ Պետրովի միջև՝ բուլղարական քաղաքականութեան հարցերի առիթով ծագած լուրջ տարաձայնութիւնների արդիւնք է եղել։ Քաղաքական շրջաններում յաճախ կերպով են վերաբերվում Նաչովիչի հրաժարականի մօտիվների անկեղծութեանը։ Շատերը կարծում են, որ հրաժարականը միջոց է ծառայել սուլթանի վրայ ազդեցութիւն գործելու համար։

ԱՍԽԱԲԱԴ, 13 օգ.։ Տեղացի պարսիկները հանդիսաւոր տօնեցին Պարսկաստանում սահմանադրութիւն հռչակելը։ Տները զարդարված էին դրօշակներով և գորգերով. երեկոյեան քաղաքը հրավառված էր. նուագում էր երաժշտութիւնը։

ՊԵՐՄ։ Գիշերս կողոպտված է Աստուածածնի եկեղեցին։

ԼՈՆԴՈՆ, 13 օգ.։ Հասարակական կարծիքը, որչափ կարելի եղաւ պարզել, ծայրայեղ չափով յուզվել է գազանային յանցանքից և յոյս է յայտնում, որ Ռուսաստանի զգաստ տարրերը կը միանան կառավարութեան հետ և կօգնեն Ստօլիպինին անիշխանութիւնը արմատախիլ անելու։ Ստօլիպինի վարվողութիւնը և գործունէութիւնը անգլիական հասարակական կարծիքի հաւանութիւնն է գրաւել։ Հասարակութիւնը յոյս ունի, որ անձնական վէճը չէ խանգարում Ստօլիպինին աշխատելու՝ իրականացնել Ռուսաստանի համար այնքան ծարաւի բարենորոգումները։

ԲԱԼԿԻ։ Կալւածատէրերի շինութիւնների հրձիգութիւնները շարունակվում են։ Գիւղացիները շարունակ այրում են նրանց դէզերը և խոտերը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 օգոստոսի։ Սեմիօնովսկի գնդի հրամանատար գեներալ Մինը իր կնոջ և աղջկայ հետ կանգնած է եղել Նոր Պետերհոֆի կայարանում, երբ երեկոյեան ժամը 9-ի մօտերքը նրան մօտեցել է անյայտ մի աղջիկ և ատրճանակ պարպելով 5 անգամ մէջքից—սպանել է գեներալին տեղնուտեղը։ Մինի կինը անմիջապէս բռնել է աղջկայ ձեռքից։ Յանցագործուհին ձերբակալված է, սակայն իր ով լինելը չէ յայտնում։ Կայարանի մէջ գտնվել է մի ռումբ։

ՀԱՎԱՆՆԱ, 13 օգոստոսի։ Կռիւ տեղի ունեցաւ կառավարական զօրքերի և ապստամբների միջև։ Սպանված են 20 ապստամբներ։ Հայլմի նախագահը մի կոչ է ուղղել զօրքերին, որով հրաւիրում է կամաւոր խմբակներ կազմել՝ զօրքերին աջակցելու համար։

ՍԱՆ-ԼՈՒԻ, 13 օգոստոսի։ Ուժեղ հեղեղը կործանել է բազմաթիւ տներ Կայէնսում և Սինեգամրում։ Տեղացիներից շատերը խեղդվել են։ Հեղեղը ընդարձակվում և ոչնչացնում և շատ տեղեր։ Վնասները հասնում են 20 միլ. ֆրանկի։ 1000 տեղացիներ մնացել են անտուն ու քաղցած։

ՄՕԳԻԼԷՎ, 13 օգոստոսի։ Գոմէլում, օգոստ. 12-ին, երեկոյեան ժամը 10-ին ընդհարում է տեղի ունեցել ռուսների և հրէաների միջև։ Արձակել են մի քանի անգամ. վնասվողներ չը կան։ Ընդհարման առաջն են առել ոստիկանութիւնը և ստրաժնիկները. բռնված են 6 հրէաներ. քննութիւն է կատարվում։

ՄՕԳԻԼԷՎ, 13 օգոստոսի։ Գոմէլում, վառօդի պահեստի մէջ ծագած պայթումի մանրամասնութիւնները։ Օգոստոսի 11-ի գիշերը պահապան զինւորի տնակն են մտնում 6 ռուսներ վինտովկաներով և ատրճանակներով, խուզարկում են պահապանին և հրամայում են չը դուրս գալ. սուլում են, որից յետոյ սկսվում է հրդեհ։ Լսվում է սոսկալի պայթում։ Տիրոջ խօսքով—պահեստում եղել է 100 պուդ վառօդ։ Քննութիւն է կատարվում։ Ի նկատի ունենալով Գոմէլում տիրող յուզալից դրութիւնը, նահանգապետը կարգադրել է փակել մնացած վառօդի երկու խանութներն եւս։

ՌԻԳԱ։ Քաղաքի ծայրում, մի մասնաւոր տան մէջ ոստիկանութիւնը գտել է 24 ռումբ և շատ պայթուցիկ նիւթեր ու կաղապարներ։

ՍՕՖԻԱ, 13 օգոստոսի։ «Вечерная Почта»-ն ասելով թիւրքաց սահմանագլխում հրացանաձգութիւնը դադարել է։ Թիւրքերը անընդհատ իրանց զօրքերի թիւը աւելացնում են։ Սպանված են բուլղար մի քանի զինւորներ։ Կան վիրաւորվածներ։ Սակայն թիւրքերի կորուստը բուլղարներից աւելի է։

ՍՕՖԻԱ, 14 օգոստոսի։ Հանդիսաւոր շքեղութեամբ բացվեց սլաւօն գրողների և հրապարակախօսների կօնգրէսը—Ստեփան Բօբչէվի նախագահութեամբ։

13 օգոստոսի

ՎԻԷՆՆԱ, 11 օգ.։ Ռուս-բուլղարական միջնադէպի առիթով «Neue Freie Presse»-ն գրում է. «Բուլղարական ինքնասիրութիւնը անսովոր չափերի հասաւ, բայց Ռուսաստանի նշանակութիւնը այնքան էլ չէ ընկել և Բուլղարիան այնպէս չէ մեծացել, որ կարողանայ մարտահրաւէր կարդալ հարևան մեծ պետութիւններին։ Եթէ նոյն իսկ կարելի լինի ենթադրել, թէ Թիւրքիայի և Յունաստանի միջև ծագած միջնադէպը պատերազմի առիթ կը դառնայ—ո՞ւմ օգնութեան վրայ կարող է յոյս դնել Բուլղարիան, որը չը խախտելով իրան գոյութիւն տուող աւանդական հովանաւորողի շահերը, վտանգաւոր խաղ սկսեց։ Յամենայն դէպս, ապագան ցոյց կը տայ, թէ ինչ կը լինի վերջը. բայց միւս պետութիւնները բուլղարական քաղաքագէտների ձեռքին խաղալիք չը պէտք է դառնան, և Բուլղարիան ստիպված կը լինի գործել իր երկրի համար, և վերջնական հետևանքում նա տանուլ կը տայ։

ԼՈՆԴՈՆ, 12 օգ.։ Տօկիօյից հաղորդում են, որ եապօնական և ռուսաց կառավարութիւնները փոխադարձաբար յայտնում են իրանց գերիների ռոճիկների քանակը և որոշում են վճարի ժամանակը։

ՄԵԼԵՆԿԻ, 12 օգ.։ Այրվում են պետական և մասնաւոր սեփականութեան անտառները։ Հրդեհը տարածվում է շարունակ։

ՄՕՍԿՎԱ, 12 օգ.։ Համադեմօկրատական կազմակերպութեան լիազօր իշխան Օրբելիանին վերադարձաւ անբերրի նահանգներում կատարած ճանապարհորդութիւնից։ Սամարա նահանգում սովը սկսվել է։ Օրենբուրգի և Օրսկիյ գաւառներում անբերրիութիւն է, սակայն կորէկի լաւ բերքը բաւականաչափ օգնեց։

ՄՕՍԿՎԱ, 12 օգ.։ Մինիկովի միջանցքում ոստիկանութիւնը գտել է սօցիալ-յեղափոխականների ամբողջ խմբի հետքերը։ Ձերբակալված են մի քանի մարդ։

ԿԵՕԼՆ, 12 օգ.։ «Koliniche Zeitung»-ը գրում է, որ Դալնիի քաղաքը ազատ նաւահանգիստ յայտարարելը ցոյց է տալիս, որ Եապօնիան մտադիր է խստութեամբ ի կատար ածել Պորտսմուտեան պայմանագրի առևտրա-քաղաքական պարտականութիւնը։ Թէև Գերմանիան այնքան էլ չէ հետաքրքրված այդ դէպքով, բայց և այնպէս նա մասնակից շահագրգռված մեծ պետութիւնների Տօկիօում արած յայտարարութիւններին։ Սրանից յետոյ Կուանտունեան թերակղզին ապրանքների ներմուծումը լինելու է անմաքս, և նաւագնացութիւնը կուժեղանայ Դալնիի և Եապօնական նաւահանգիստների միջև։

ՄԻՆՍԿ, 12 օգ.։ Հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան տեղական մարմինը մտադիր է առաջիկայ ընտրութիւններին համախմբել բոլոր ռուս ընտրողներին։ Անդամներից շատ շատերը ընդունում են խաղաղ վերածնութեան ծրագիրը։

ՍԱՐԱՏՕՎ, 12 օգ.։ Կամենկա գիւղի բնակիչները ինքնակամ կերպով դատ կտրեցին, որով հրձիգութիւնների մէջ կասկածվող երկուսին սպանեցին, երեքին վիրաւորեցին։

ԿԱԼԿՈՒՏԱ, 12 օգ.։ Կալկուտայից դէպի հիւսիս ընկած գաւառներում մեծ յուզմունք կայ, որ հետևանք է այն լուրերին, որ իբր թէ եւրոպացիները խորամանկութեամբ կամենում են տեղացիներից զէնքը վերցնել. տեղ-տեղ եւրոպացիների վրայ ճնշում է գործ դրված։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 օգ. Արդարադատութեան մինիստրութիւնը մշակել է մի նախագիծ, որով մշակվելու է քաղաքացիական կանոնագրքերը. նախագիծը ներկայացված է մինիստրների խորհրդին ի քննութիւն։

ԼՈՆԴՈՆ, 12 օգ.։ «Daily Telegraph»-ին հաղորդում են Տօկիօյից, որ չին կօմիսարները և պետական գործիչներից աչքի ընկնողները առաջարկում են իբրև փորձ սահմանադիր կառավարութեան ձև մտցնել երկրում։ Ենթադրում են, որ կընդունվի եապօնական սիստեմը։ Անհասարակ Չինաստանը ընդարձակ չափով օգտվում է Եապօնիայի օրինակին, թէև հետևում է այնպիսի քաղաքականութեան, որ անկարող է Եապօնիայի համակրանքը զարթեցնել։ Չինաստանի գործողութիւնների ձևը այժմ բարեյաջող է Ռուսաստանի համար։

Կ. ՊՕԼԻՍ, 12 օգ.։ Վերջին երկու օրերս կրկին լուրեր երևացին, որ իբր սուլթանի առողջութիւնը վատացել է. բայց ըստ երևոյթին սոսկ անցողիկ դէպքեր են եղել երիկամունքների խրօնիկական հիւանդութեան պատճառով։ Երէկվայ սելամլիքը անցաւ նորմալ կերպով։ Սուլթանի տեսքը յոգնած էր, բայց ընդհանրապէս նա առողջ էր երևում, թէև ներկայ եղող դիպլօմատներից և ոչ մէկը տեսակցութեան չընդունվեց։

ԻԶՕՎԿԱ, 12 օգոստոսի։ Երեկոյեան Դրուժկովկի հանքերում բանւորական միտինգ էր։ Միխայլիչենկօ Դումայի աշխատաւորների մասին մի ճառ արտասանեց, որը ընդհատվում էր ամբոխի կողմից արված յեղափոխական բացականչութիւններով։ Ճառը վերջացնելով Միխայլիչենկօն, անմիջապէս մեկնեց քաղաքից։ Յանկարծ, յայտնի չէ որտեղից, լսվեց մի տրաքոց. Թաղային հսկիչը հրամայեց կօզակներին արձակել ամբոխի վրայ. պարպվեցին ինը համազարկ. ութ մարդ սպանված է, երեսունչորս վիրաւորված։ Բանւորները տասը սպանվածների թաղեցին, շարունակ յեղափոխական երգեր երգելով. գործարանները կանգնեցին մէկ օրով։

ՄՕՍԿՎԱ, 12 օգոստոսի։ Մօսկվայի զինված ապստամբութեան և բանւոր պատգամաւորների գործի քննութիւնը վերջացած է։

ԲԻԼԲԱՕ, 12 օգոստոսի։ Շատ գործարաններում աշխատանքները վերսկսեցին։ Բայց և այնպէս լեռնահանքային բանւորների գործադուլը շարունակվում է։

ԼՕԶԱՆՆԱ, 12 օգոստոսի։ Վախճանվեց յայտնի գրող Գերցենի որդին՝ բնախօսութեան պրօֆէսոր Ալէքսանդր Ալէքսանդրովիչը։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ, 13 օգոստոսի։ (Պաշտ. թղթակցից)։ Օգոստոսի 7-ին Իւզովկից՝ բանւորական միտինգի մասին խփած հեռագիրը սխալ է. վիրաւորված է մի ձի միայն, իսկ մարդկանցից սպանվածներ և վիրաւորվածներ չը կան։

ՍԱՄԱՐԱ, 13 օգոստոսի։ Եկատերինօվսկում ամբոխը յարձակվեց պահակների վրայ, որոնք պաշտպանվեցին իրերով. կան վիրաւորվածներ. ամբոխը ցրված է։

ՄՕՍԿՎԱ, 12 օգոստոսի։ Միապետական կուսակցութիւնը հրատարակել է ամենահպատակ մի ուղերձ, որի մէջ ի միջի այլոց ասված է, որ միմիայն մի հաստատակամ և վճռական անձնաւորութեան նշանակելը առանձնայատուկ լիազօրութիւններով հանդերձ հանգստութիւն և անդորրութիւն կը մտցնի զօրքի մէջ, հակառակ դէպքում զօրքի գրգռումը և յուզմունքը արագութեամբ կաճէ, և որ Պետական Խորհրդի նախկին կազմից անհրաժեշտ է թողնել սոսկ Կայսրին նուիրված անձնաւորութիւններին։ Եթէ Կայսրը վճռել է շարունակել փորձը Պետական Դումայի հետ, այն ժամանակ միապետականները ի կատար կածեն Կայսրի կամքը և իրանց ոյժերը լարելով կը ջանան հասնելու ըստ կարելոյն լաւագոյն հետևանքների ընտրութիւնների ժամանակ, սակայն մի պայմանով, որ փոխվի ընտրողական օրէնքը և հրէաները հեռացվեն ընտրողական ցուցակից։

15 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ Մինի սպանողի գրպանում գտնված է մի անցաթուղթ—Պենզենսկից գեղջկուհի Սօֆիա Լարիօնօվայի անունով. նա ապրելիս է եղել Պետերհոֆի մօտ ընկած Լուիգինա գիւղում. տեսքով երեսուն տարեկան է։ Քննութիւնը կատարում է կարևոր գործերի քննիչ Զայցեվը։

ՎԱՐՇԱՎԱ, 14 օգոստոսի։ Ցերեկվայ ժամը 2-ին, Վէյսկի փողոցում ատրճանակի հարուածով սպանվեց Վարշավայի գեներալ-նահանգապետ գեներալ Վօնլիարլեարսկին, մարդասպանը ազատ է։

ԹԵԼԱՒ։ Գիշերը փողոցում ծանր կերպով վիրաւորված է Գաազէ օֆիցէրը։ Հրացանաձգութեան ժամանակ սպանվել է ուսուցչի կինը և սրա քոյրը։ Չարագործները փախել են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական։ Թագաւոր Կայսրը, գիւղացիական հողից օգտվելու շրջանը ընդլայնելու նպատակով, բարձրագոյն հրամայել բարեհաճեց. I. յանձնել գիւղացիական հողային բանկին գիւղին վաճառելու համար, ա) գիւղատնտեսութեան օգտվելու համար գոյութիւն ունեցող այն ուդելնի հողերը, որոնք չեն մտնում անտառային ամարանոցների սահմանների մէջ, նրանց համար կապված կապալառուական պայմանագրերի վերջանալու չափով. բ) այն անտառամասերը, որոնք ընկած են մէջ առ մէջ (черезъ полоса) կառուցված կալուածքների և նրանց շրջապատող շինուածքների մէջ և գ) Արխանգելսկի և Վօլօգդայի անտառային հողաբաժինների այն մասերը, որոնց կարելի է վաճառքի հանել գիւղացիներին։ II. գիւղացիական բանկին յանձնվող ուդելնի հողերի կազմից հանել, ա) այն հողաբաժինները, որոնք որոշված են գործարանների, արդիւնաբերական հաստատութիւնների և մշակելու համար որոշած հողաբաժինները, բ) ուդելնի գոյքերի այն մասերը, որոնց մէջ կառուցված են ամառանոցներ և այլ տեսակի գնահատելի շինուածքներ և այգիներ և որոնք կարող են օգուտ տալ այնպէս, որ համապատասխան չեն գիւղացիական տնտեսութեան սովորական պայմաններին. գ) Կրիմի, Անդրկովկասի և Բելօվեժսկիյ անտառամասի ուդելններին պատկանող հողաբաժինները. դ) գիւղացիական հողային բանկին յանձնելիք հողերի բաշխումը գիւղացիների մէջ և նրանց գնահատութիւնը առանձին-առանձին թաղամասերով դնել սոյն տարվայ մարտի 4 ին Բարձրագոյն անուանական ուկազով հաստատված հողային բարեկարգիչ մասնաժողովների վրայ գիւղացիական բանկի աջակցութեամբ և գիւղացիական բանկի ուդելնի հողերը յանձնելու կարգի նկատմամբ յանձնող հողերի և գիւղացիներին ապագայում վաճառվելի պայմանների համար կազմվելիք հաշուետուութեան գործը յանձնել պալատական մինիստրին, նախօրոք համաձայնութեան գալով ներքին գործերի և ֆինանսների և հողային բարեկարգութեան ու երկրագործութեան գլխաւոր կառավարչի հետ այն պայմանով, որ այս ենթադրութիւնները յանձնվեն Բարձրագոյն հաճութեան մօտիկ ապագայում։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզային հ.
Կ. Մ. ՋԻՒՂՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Ձ. Ի. ԲԱՐԱՆԱՍՈՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Գ. ՏՕՆԻԷՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՇԱՐԱՑԵՄԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ՏԻԿ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
ԻՐԻԿՈՒՆՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.
Խ. Գ. ԱՐԵՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. Հիւանդները ձրի։ Հանգստարան [illegible] և օպերացիայի համար սենեակ։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով։
Ելիզավետինսկայա փողոց, 101, տելէֆօն 1026
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ՆԻԿԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և էլեկտրօ-բուժութիւն։
Գ. Ն. ԴԵՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՋԻՆԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԷՅԷՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և նանուոների (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին համարներից։
[illegible] 85—100

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ
ԴՊՐՈՑԸ
յայտարարում է, որ լրացուցիչ քննութիւնները բոլոր դասարաններում և ընդունելութեան քննութիւնները միջին և բարձր պատրաստական դասարաններում, առաջին և երկրորդ դասարաններում կը սկսվեն օգոստոսի 23-ին։
Փոքր պատրաստական բաժանմունքում ընդունվում են 7-ից մինչև 9 տարեկան հասակի մանուկները առանց քննութեան։
Խնդիրները դպրոցի վերատեսուչի անունով (ներփակելով վկայականները՝ մետրիկական, կոչման և ծաղկի) ընդունվում են դպրոցի գրասենեակում ցերեկվայ 10—12 ժամը։
(շ. կ. չ.) 3—3

ԲԺԻՇԿ
Գ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, մասնաւորապէս կրծքի։
Քննութիւն և բուժումն X ճառագայթներով առաւօտեան ժամը 10—11 և երեկոյեան 5—7։
Բաէնէվսկայա փող. տ. № 7 (Վէքսելի հիւրանոցի մօտ)։ 5—30

ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԵՐԿՈՒ ՈՒՍԱՆՈՂ
Մաթեմատիկոս և պատմաբան
(Լազարեան ճեմարան աւարտած)
Ցանկանում են ուսուցչական պաշտօն ստանալ հայոց դպրոցներում։ (Ցանկալի է միևնոյն տեղում)։ Դիմել՝ Москва, Мал. Харитоновскій пер., д. Котова, кв. 10.
2—3

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՐԱՍԵՆԵԱԿԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
Թիֆլիսի վաճառականական ուսումնարանին կից
(Երրորդ տարի)
Կուրսերում աւանդվում են. հաշուապահութիւն, առևտրական թուաբանութիւն, առևտրական թղթակցութիւն և առևտրական իրաւունք։ Պարապմունքների սկիզբն է 1906 թ. սեպտ. 15-ից։ Դասընթացքը շարունակվում է 6 ամսից ոչ պակաս։ Պարապմունքները երեկոներն են, շաբաթական 3 անգամ։ Ունկնդիրներ կարող են լինել 2 սեռից գրագէտ մարդիկ։ Դասընթացքի գինն է 40 ռուբլի։
Խնդիրները Թիֆլիսի վաճառականական դպրոցի վերատեսուչի անունով ընդունվում են ամենայն օր, ցերեկվայ ժամը 10—12-ը, վաճառականական դպրոցի դիւանատանը։
(շ. 1 անգ. ե.) 1—4

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն՝ անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կաղնեանսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կաղնեանսկի փողոցից № 2.
(ա. օ.) 211—300

Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրայ № 23, պրավօսլաւնիի հոգևոր սեմինարիայի դիմաց
„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ"
մականունով։ Գները 70 կոպէկից մինչև 2 ռուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։
Ալէքսանդր Յարութինով
(հ. կ. ե.) 47—100

Լոյս տեսաւ և վաճառվում է
ԵՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ՆՈՐ ՊԻԷՍԸ
ՍՈՒՐ ԵՒ ՀՈՒՐ
(Ո՞վ է մեղաւոր)
Էպիզոդներ հինգ արար. եւ ապօթէօզով
1905 թ. հայ-թիւրքական ընդհարումներից
Արարուած I—Գիշատիչ թռչուններ. II—Դատապարտելի անհոգութիւն. III—«Շէյթան» գործերից. IV—Մարմնաւոր թշնամութիւն. (կանգնել է Իսլամը) և V—Ակն ընդ ական։
Ապօթէօզ։
ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ
Միանուագ 10-ից աւելի կանխիկ վճարով գնողներին—20%, 30ից—25% և 50-ից—35% զիջում է լինելու։
Դիմել միմիայն հեղինակին այսպէս՝ Эривань, Эмину Терь-Григорянцу.
(հ. կ.) 8—15

„ԳՈՒՏՏԵՄԲԵՐԳ"
գրախանութում վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները.
«Քերականութիւն» (ա. բ. և գ. մասերը միասին) 5-րդ տպ. Ս. Պալասանեանի 75 կ.։
«Ընդհանուր պատմութիւն» հին դար, Վինոգրադովի, Թարգ. Խաժակի, 1 ռ.։
«Գծագրութեան օրինակներ», Գ. Լևոնեանի—20 կ.։
Այբբենարան կուբիկներով, 1—50 կ.։
«Հայաստանի» քարտէզ և հարևան երկիրներ—1 ռ.։
«Այբբենարան» մի թերթի վրայ 5 կոպ.
«Արևան ձայներ», 60 կ., կազմած 85 կ.։
«Թուաբանական խնդիրներ և օրինակներ», ա. բ. և գ. տարիների համար, փոխ. Ար. Սպարապետեանի. ամեն մի տարվանը 30 կ.։
«Լիակատար բառարան», ռուսերէնից հայերէն Յ. Դաղբաշեանի, 8 ռ.։
Նոյնը կազմած, 10 ռ.։
«Թուաբանական օրինակներ և խնդիրներ» առաջին տարի փոխ. Մ. Սամուէլեանի, 15 կ.։
«Քրիստոնէութեան արշալոյսին», Ֆարրար, Թարգմ. Մ. Վարդ. 2 ռ. 50 կ.։
«Սոխակ Հայաստանի», 1 ռ. 20 կ.։
«Լծի տակ» Վազով, Թարգմ. Յ. Արարաքեանի, ճանապարհածախքով 1—25։
«Եւրոպա և Հայաստան», Ամֆիտէատրովի, Թարգ. Մխիթարեանի 10 կ.։
«Անիի կործանումը», Բ. Այվազեանի, 70 կ.։
«Ալբոմ Անիի տեսարանների» (ալբոմին կցված է և Անիի յատակագիծը, Բասմաճեանի, 1 ռ., պօստի ծախքով 1—24 կ.։
Գրախանութում վաճառւում են Ղազարոս Աղայեանի, Ն. Տէր—Ղևոնդեանի և Յ. Արաքեանի «Մայրենի Լեզուի» ա. բ. գ. և դ. տարի դասագրքերը։ Գումարով գնողներին բաւարար զեղչ, «Նոյն տեղից կարելի է ձեռք բերել ամեն տեսակ դասագրքեր (հայերէն ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն և այլն)։
2—2

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճաւաձէի № 36
(կ. չ. ու.) 40—100

Մի ընտանիք, որի հայրը անդամալոյծ պառկած է տանը, կինը և 6 երեխաները անհաց-անտուն մնացված են մուրալ, խնդրում է բարի մարդկանց ուշադրութիւնը դարձնել դէպի իրանց դժբաղդութիւնը։ Նուէրները խնդրում են ուղարկել Բարսեղ Մովսէսեանցին՝ Орловская ул., домъ Джанибекова, № 15, въ IV участкѣ.
4—4

ՎԱՐՁՈՒ Է ՏՐՎՈՒՄ
Գայիանեան օրիորդաց դպրոցի ներքևի յարկը (Սօլօլակ, Պասկևիչի փողոց, տուն Տէր-Աստուրօվի № 13) 3—3 կամ միասին 6 ՍԵՆԵԱԿՆԵՐ և այլ յարմարութիւններով։ Դիմել դռնապան Յարութիւնին։

### ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը նշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

| | Փօստային | Մարդատար. | Արագ. | Ապրանք |
|---|---|---|---|---|
| Բագուից դուրս գալը | 4 ժ. 53 ր. ցեր. | 11 ժ. 03 ր. ցեր. | 12 ժ, 20 ր. գիշ. | 4 ժ. 03 ր. գիշ. |
| Թիֆլիս հասնելը | 11 » 26 » » | 5 ժ. 25 ր. առ. | 1 ժ. 30 ր. գիշ. | 9 ժ. 37 ր. երեկ. |
| Թիֆլիսից դուրս գնալը | 12 » 26 » » | 6 ժ. 01 ր. առ. | — | — |
| (Թիֆլիսի ժամանակով) | 1 » 24 » » | 6 ժ. 59 ր. առ. | — | — |
| Բաթում հասնելը | 1 » 38 ր. գիշ. | 7 ժ. 07 ր. եր. | — | — |
| Բաթումից դուրս գալը | 5 » 22 » » | 5 ժ. 24 ր. ցեր. | — | — |
| Թիֆլիս հասնելը | 6 » 11 ր. եր. | 6 ժ. 39 ր. առ. | — | — |
| Թիֆլիսից դուրս գալը | 6 » 58 » » | 7 ժ. 37 ր. առ. | 5 ժ. 35 ր. ցեր. | 10 ժ. 40 ր. գիշ. |
| (Թիֆլիսի ժամանակով) | 7 » 56 » » | 8 ժ. 35 ր. առ. | 6 ժ. 33 ր. ցեր. | 11 ժ. 38 ր. գիշ. |
| Բագու հասնելը | 1 » 20 ր. ցեր. | 12 ժ. 42 ր. գիշ. | 6 ժ. 19 ր. առ. | 3 ժ. 55 ր. ցեր. |
| Երևանից դուրս գալը | 12 » 02 » » | — | — | 11 ժ. 26 ր. գիշ. |
| Կարսից » | 3 » 57 » » | — | — | 3 ժ. 16 ր. գիշ. |
| Ալէքսանդրօպօլից դուրս գալը | 7 » 38 ր. եր. | — | — | 7 ժ. 06 ր. առ. |
| Թիֆլիս հասնելը | 5 » 06 » առ. | — | — | 4 ժ. 49 ր. ցեր. |
| Թիֆլիսից դուրս գալը | 11 » 12 » գիշ. | — | — | 3 ժ. 25 ր. ցեր. |
| (Թիֆլիսի ժամանակով) | 12 » 10 » » | — | — | 4 ժ. 23 ր. ցեր. |
| Ալէքսանդրօպօլից դուրս գալը | 10 » 30 » առ. | — | — | 2 ժ. 47 ր. գիշ. |
| Երևան հասնելը | 1 » 55 » ցեր. | — | — | 6 ժ. 10 ր. գիշ. |
| Կարս հասնելը | 4 » 23 » » | — | — | 8 ժ. 48 ր. առ. |

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Երկու սեռի անձանց համար
(Баку, уголъ Красноводск. и Меркурьевск. д. Набатовыхъ)
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։
Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ մենայնօր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։
Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Тер-Каспарову.
(ե. շ.) 10—30

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
(Тифлисъ, Сололакъ, Лермонтовская ул. № 15)
Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն. 2) Առևտրական թուաբանութիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուաբանութիւն համրիչի վրա. 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։
Ձրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա։ Պարապմունքները կուրսերում լինում են ամեն օր։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից։ Ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 6 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմօնտօվսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ С. П. Мануэльянцу.
(կ. չ.) 12—25

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5